

2004

№ 1708 ✓ 254-64

ԲԱՆ ԳՈՐԾՆԱԿԱՆ

Որ է մի միայն խնդրելին ամ
բանաւորի :

ԵՒ ԳՈՐԾ ԲԱՆԱԿԱՆ

() Ինչոք է օրինակօք Չորից Բարոյա-
հան Առաքինո-ւնց :

Յօրինեալ 'ի Հ. Մկրտիչ վարդէ Աւգե-
րեան 'ի միաբանուածէ մեծին Միսի
Թարայ Աբբայօր :

3523-52


Ըստ հայցման բանասերի և անասերի Պրն
Մինասայ քր Պեպրոսեան , որ 'ի
արատելչոնայ :



Յամի . 1812 . Կմկմ .


Ի ՎԵՆԵՏԻԱ

Ի վանս սբյն Ղաղարու :



891.99-1





ԱՌ ԲԱՆԱՆՆԵՐԻՆ

Գ Եւ իննաց խնորհես՝ խնորհողք Բանի, եւնէ
 զիւնան գլխովին: Իւննի՛ն ո՛ւ յինիւնն է խնորհե
 շի, այլ՝ զն զիւնան աստեւոյ, ասաց աստեւոյ որ
 գփանէ զիւնան, զի՛ն աս ՚ի խնորհիւ շինիցի տե
 ղոյ: ո՛ւն էն ոչիւն, գրեալ է, Բժշկիւն, Բնո՛ւն է
 զեզտ նոցա, ոչ ընդ իսմ իարողաց, այլ՝ հիւնանդոց:
 Իսկ արդ՝ ո՛ր այն իւննիւն էրէ, զոր Բանն խոստա
 նայ, եւնէ ո՛ւ ինիւն իսկ Բանն - ըստ այնմ, * Ա
 ստեւոյ զԲանն իւր, և Բժշկեաց զնոսա, և իւր
 իննաց զնն յամ աստիանոսէ իւրեանց || - որ և եկա
 սորեալ աստեւո՛ւ ասաց: * Եւ ինի, զի զիւնան
 սանիցին, և աստեւոյ ևս սանիցին ||: և թէ՛
 * ՉԲանն, զոր էս խօսեցայ ընդ Յեզ, հոգի է և
 իննիւն ||: և դարձեալ: * Ո՛ւն հարձե՛ Տայն ինն
 ցի Տարդ, այլ՝ ամ Բանիւն, որ եւանէ ՚ի Բերանոց
 նոյ ||: և՝ * Ո՛ր զիս գփանէ, գփանիցի ըն
 իննս ||:

Ասել սանիս ո՛վ Բանասէր անասէր - ո՛ր է թէ
 հասից և գփից զԲանդ զայդ: զԲանն՝ զոր աստե
 վեաց ան՝ ՚ի իրիւնի փիւնիւնաց: զԲանն՝ որ զԲանն
 իննաց յաստիանիանաց սանի: զԲանն՝ որ ո՛վ էր
 զինի հաստապետան: զԲանն՝ որ էր ՚ի ո՛վ զԲանէ
 աստեւոյ, և անոյ: զԲանն՝ որ եւնայ Տարձին, և
 Բնայեաց ՚ի Տեզ: զի և ինն զինիցի Բնայեւ ՚ի

նմա յաստիանն:

Եւնէ արդարեւ ճշմարիտ Բանասէր իցես, գփա

նէս զԲանն ինդրելի • որ է՝ քէր քո և անժ քո ,
 Իէանք քո և Իեղո-ջիւ : Եւ ո՛րպէս : Ե՛ւնէ եղ
 Բայրասիրտ-նին է նշանակի անժսիրտ-ն , ապա և
 քոյն Իարեւոր Բանի՝ նշանակի գիւտի Բանին ան :
Ապա Ճշմարիտ Բանասիրտ-նին Ճանաչէ նախ
 զյարգ Բանին , որ քոնա ինքեան , այսինքն
 զԲանականոն-նի • և երկրորդ՝ զպարտականոն-նի
 Չարելոյ Բանի՝ Բանասորապէս • * զի՝ ՚ի Բանից քոյ
 արդարացիս , և ՚ի Բանից քոյ պարտասորելոցիս || ,
 անաջի ան , և ճարտիան • Ըն որոյ և ո՛չ ատեն
 անգործ՝ է՛նէ զնէրբարձարելաւ Բանն , և է՛նէ
 զարտաբերեան ընդ Բերանն , այլ՝ յանի Կնարա
 արի ատենէլ գործնական և արդիւնարար զնո
 սին , և ընդ նոսին զսերժն Բանին անժ՝ արկեալ որ
 պէս յերկիւր Բարի և պարարտ , պարզաբերութի յԿա
 ընդարտոն ըսի՝ Ժողովելի ՚ի զպէճարանս երկնից :
Եւ արդ անոն-նիք յամենայնէն , զի գործս ան
 անաջիկայ՝ սուղ Բանի՝ , և պարզաւից արդեամբք ,
 Բան Գործնական Վերայայնեալ , քոյն Բանասի
 ըստ ընդելոց ՚ի զքո ատենաւ զԲանն ընդրոն-նի ,
 որով ընդունիջիք զԲանն ընդարտոյ՝ որ Իարտն է
 Իեղո-ջանել զգիս յեր , ՚ի քո յն ՚ի քո Տեր :
Յաւելաւ և Գործ Բանական՝ որպէս ատենա
 ինց գործնական Բանի , զգաւի օրինակօք ըստ օ
 ընկաց Բանասոր գործոց՝ ըրելոցնց Բարոյական
 անասիւն-նից • * զի Իսպարեալ իցէ ճարտն անժ՝
 յամ գործս Բարոն-նի Կասարաբեալ || :





ԲԱՆ ԳՈՐԾՆԵԿԵՆ

Հ Ա Տ Ո Ւ Ա ծ . Ա :

Նպաստի բանաստեղծի, և նաև բանականի :

ա .

Բան կարևոր՝ բան գործնական ,
բանասիրիդ՝ ազդեմունական .
Թէ բան և գործ՝ են զուգական ,
դու ես յաղթօղ, ես՝ յաղթական :

բ .

Քերթող անուն՝ արդիւնական ,
կերտող արդեամբք՝ է սլատունական ,
բանիւ կրթող՝ ըղբանական ,
ի շինութի՝ որդւոց մարդկան :

գ .

Ձի և Պոճէան՝ հելլենական ,
գործէ անունամբ՝ Արարչական .
Թող զի Պէյիա՝ այլազգական ,
շինուած բանի՝ ասի ըստ տան :

դ .

Շինող էիցս՝ Էնն էական :
Բանիւ իւրով՝ արար զոր կան .
զի բան նորա՝ գոյացական ,
զանգոյս առնէ՝ գոյաւոր բան :

Է .

Իսկ արարողքս՝ ըստացական ,
 գոյս ընդ գոյից՝ զօրել ուսան .
 զի են պատեհք՝ պատահական ,
 գոցծածք իւրեանց՝ յոր պանծանան :

Ը .

Յորս ոյք կազմեն՝ բան յօդական ,
 անուն առին Վերթողութեան .
 ուստի յանձինս՝ առնկալան ,
 պարծանս անգամ՝ ունայնութեան :

Թ .

Որպէս այն թէ՛ և գեր մարդկան ,
 ՚ի հիւսս բանից՝ գուշակք գտան .
 զի ստեղծողին՝ զստեղծարանն ,
 յոյժ գուլ վարկան՝ հաղորդական :

Ճ .

Թող պարծեսցին , ոյք սւատրեցան ,
 երբ քան ըստ չափ՝ վերամբարձան .
 զանձին սահման՝ ոյք մոռանան ,
 որ ինչ եղեն՝ ոչ էանան :

Կ .

Մեզ կարևորք՝ առաջի կան ,
 բանք , բողորից՝ յոյժ շահեկան .
 զի ամենայն՝ մարդ բանական ,
 է արարչին՝ պատկեր յինքեան :

Զ .

Գ .

Եւ որ վարէ՛ դործ մարդկութեան ,
 նա առաւել՝ մերձի սկան .
 ապա թէ ոչ , անդործ այն բան ,
 բանի ընդդէմ՝ է , կամ անբան :

Ժւ .

Իմաստասեր , Խծաբան ,
 յայս են վճիռ՝ քաջ ժաբան .
 թէ աշտիճանն՝ իմացական ,
 է յաստիճան՝ ներդործական :

Ժբ .

Ուստի զոճարթուիք՝ դասք անդրանկան ,
 են երազուիք՝ յամենայն բան .
 ասեմ՝ ՚ի դործ՝ գերբանական ,
 մտօք կամօք՝ ՚ի մի վայրկեան :

Ժգ .

Իսկ Եհովահ՝ միտք անսահման ,
 ներդործութի՛ն՝ բուն իսկական .
 գերամաքուր՝ անճառական ,
 ոյր բանն է դործ՝ միշտ էական :

Ժդ .

✠ Ապա սահման՝ բանաւորին ,
 է բան ուղղեալ՝ ՚ի դործ բարին .
 ծնունդ մտաց՝ բանն յիս ներքին ,
 նմին թարգման՝ բանս արտաքին :

A 4

Ժե .

ԺԷ .

Այլ երկոքեանն՝ 'ի մի կարգին .
 յայտնել զխմաստ՝ ներգործելին .
 զոր սահանջեմ՝ գործ ըստ անձին ,
 յայտնել զհաճոյս՝ մերձաւորին :

ԺԸ .

Արկին գործեաք՝ գործք մեր կրկին ,
 հոգւոյ , մարմնոյ՝ սաշտօն հարկին ,
 մարմնաւորօքս՝ հրթիւլ յողին ,
 երկրաւորօքս՝ բերել յերկին :

ԺԹ .

Սուզ այս բանիւ բանակածին ,
 շատ ինձ տեսցէ՝ բան , ահանին .
 մարդն է յարդեանց՝ գործնականին ,
 բանք ընդ գործովք՝ միշտ անկանին :

ԺՂ .

Խորհուրդ յայտնի՝ տես 'ի դազանին ,
 յերանաւէտ՝ 'ի վիճակին .
 յոր արարաւ՝ մարդն առաջին ,
 գործել սահել՝ նախ զառաջին :

ԺՁ .

Չորմէ կախի՝ և եւք վերջին ,
 վերին վախճան , յոր գործք յանկջին :
 ապա թէ ոչ , ոյք խոտորին ,
 խոտորնակի՝ վայրաբերին :

Ե .

Ո՛հ , մարդկութեա՛ աւանդյեալին ,
 զի միշտ գլուխն՝ անսայ ոտին .
 վտարանջեալ նախ հօրն յադին ,
 միշտ է ստամբակ՝ և իւր որդին :

Իւ .

Որդիք մարդկան՝ ցե՛րք 'ի ստորին ,
 խստասրտիք դուք յանբարին .
 ունայնութի՛ որ առ օրին ,
 ջունայնասցի՛ 'ի ծագ նորին :

ԻԹ .

Տես , զի մանդաղ՝ եհաս հասկին ,
 ցորեանն օրհնի՛ արդիւնք երկրին .
 իսկ որ մնաց՝ խռի՛ւ սորին ,
 զյարդըն անպէտ՝ 'ի հուր արկին :

ԻԿ .

Թէ փայտք դալար՝ չէ չոր այրին ,
 չորք իրաւամբք՝ միշտ տոչորին .
 յանգործ պահեստ և քանքարին՝
 պատժիմք , թող թէ 'ի գործ ջարին :

ԻԿ .

Այլ ես խորհիմ՝ զանկարելին ,
 զայլազգ , անձին՝ վեճակելին .
 յոյս մի ունիմ , թէ փոխեսցին ,
 իմ վարք , հին կառք՝ ընթացողին :

A 5

ԻԷ .

ԻԷ .

Չոր ոչն յուսամ՝ յայլում՝ անձին ,
 'ի հանդիսի՝ ասպարիզին .
 դժե՛ն , ասեմ՝ դընացք գորին ,
 ոչ են բարի՝ և ելք նորին :

ԻԸ .

Արդ իրաւունք՝ և ինձ ասցին ,
 ըստ ընթացիցս , զոր այլք տեսին .
 դանդաղաշարժ միշտ առ բարին ,
 ժիր և նովին՝ 'ի փոյթ չարին :

ԻԹ .

Չի որ դնայ՝ ոչ , ընդ ուղին ,
 ոչ հասանէ՝ 'ի բուն տեղին .
 ուր չիք և կայք՝ ճանապարհին ,
 հարկաւ մոլար՝ երթք , մոլորին :

ԻՁ .

Իսկ ոյբ կամաւ՝ ընթացք թիւրին ,
 կորուստ՝ բաժին , կորուստ դիւրին .
 որ ոչ առնէ՝ զիւր արժանին ,
 հասցէ անշուշտ՝ անարժանին :

ԻՊ .

Արդ զի՛նչ օգուա՝ և շարք բանին ,
 թէ ոչ բերին՝ 'ի սխտանին .
 'ի գործ , իմա՝ դու , երեքկին ,
 հարկի , օգտի , չ սլառաճին :

Ը•

Հանա սիրեա՛ զքերթողանին ,
որ զայս զերիս՝ 'ի յանդ հանին •
և ոչ որոց՝ աչք յայլ հային ,
այլուր են աջք՝ ըստ շիւ հրէին :

ԸԹ•

Միշտ ցուցանեն՝ զցանկալին ,
և կարկառեն՝ ըզխորշէլին •
ոչ մերկանամ՝ զդէմքս չարին ,
լաւ է ծածկել՝ ըզգարշէլին :

ԸՔ•

✱ Այլ ես փոխիմ՝ 'ի վատթարէն ,
'ի լաւագոյն՝ անդր , 'ի լաւէն •
յայտնել աստէն՝ թէ յի՞նչ ուժեն ,
բանաւորի՝ բանք մեծաշէն :

ԸԿ•

Քիւ՛ , իմ հասաիչ , որ ետդ որ էն ,
արարչակերտդ իմ յոջնէն •
վերականգնիչ՝ և յանկմանէն ,
նորաստեղծօղդ՝ նոր հողեղէն •

ԸԼ•

Չայս խոստանամ՝ փոխիլ անդրէն ,
յոր զիս հաստեր՝ 'ի սկզբանէն •
յանեղծ վիճակ՝ անձեղէն ,
բերիլ կենօքս այս մարդկեղէն :

A 6

ԸԿ•

ԼԷ .

Արդ աղաչեմ՝ բուռն հար զինէն ,
 'ի նորոգել՝ զաւերս յինէն .
 նորակերտեալ գեղեցկաչէն ,
 զիմ ըղհնութիս՝ աղամեղէն ։

ԼԸ .

Հան զոր 'ի յիս՝ սիրտ քարեղէն ,
 առնր թ խոստմանդ՝ ըլմարմնեղէն .
 որով լինիմ ես հոգեղէն ,
 կամահատար քո համօրէն ։

ԼԹ .

Ազդեալ յոգիս՝ բան լուսեղէն ,
 կերտել քերթով ած՝ բուն բանեղէն .
 զի որք լսեն , և վերձանեն .
 քե շինութի՝ անձանց քաղեն ։

ԼՄ .

Գրչիս ընուլ՝ նախ , զոր գրէն ,
 առնել՝ զոր ինչ՝ ուսուցանէն .
 քարողք վարուց՝ ուժգին հնչեն ,
 քան ըղձայնից՝ որ զօդ բաղսեն ։

ԼԾ .

Տուր իմ անձին՝ զօրըստօրէն ,
 հաց , զոր կամիմ՝ ջամբել այսրէն .
 ընդ հարկաւորս՝ և զօր օգտէն ,
 և զոր վայել , յեւուլ օրէն ։

Լս .

Հ Ա Տ Ո Ւ Ա Ճ . Բ :

Բան կարևոր 'ի պէսս Տարնայ յառօրէակն
կէանս :

խ .

Արդ մուտ բանիս՝ դուռն ինձ բացաւ ,
մեծ՝ կարևոր , օրինակաւ .
քանզի հացի՝ նշանակաւ ,
բան՝ քաղցեւոց՝ միշտ քաղցրացաւ :

խա .

Հաց հաստատէ՝ ըզսիրտ , իրաւ .
ուրախարար՝ և գինի լաւ .
զո՛ւարթարար՝ իւղ յաւեւաւ ,
այլ մեք հայցեմք՝ հաց լոկ՝ կանխաւ :

խբ .

Եղբայր հացի՝ ջուրն ըստեղծաւ ,
նա ո՛ղջ կեցցէ՝ միշտ , առ գինեաւ .
զի թէ ունիս՝ սաստիկ ծարաւ ,
գինին այրէ , չեղև քեզ բաւ :

խգ .

Խնդրեա՛ զոր ինչ պէտք են հարկաւ ,
առնուս՝ և զոր ո՛չ խնդրեցաւ .
Թէ շատանաս՝ հարկաւորաւ ,
գացես 'ի նոյն՝ զամէնն անբաւ :

խդ .

խի֊

Չիք օգտակար ինչ ընտրանաւ ,
որ ընդ կարևորն՝ ոչ զօգեցաւ •
ցուցից զսոյն՝ աստէն կարգաւ ,
Թէ ինձ լսես՝ տակաւ տակաւ :

խի֊

Հող արգաւանդ՝ ճընօղ հացի ,
մայր բազմածին՝ բիւրապիսի •
քեզ պարգևէ՝ զոր քեզ պիտի ,
և աւելեօք՝ բերս լը ազգի :

խի֊

Այլում՝ այլ ինչ՝ յիւրում՝ անդի ,
այլում գարձեալ՝ ՚ի մեծ գաշտի •
լէր խնդակից՝ քում ընկերի ,
ծանիր , եղև՝ քո հաւաստի :

խի֊

Տես , ոչ և հող՝ արգիւնասցի ,
Թէ յեթերոյ՝ ոչ օգնեսցի •
ուր են ամբարք՝ ամենայնի ,
որ ինչ յերկիր՝ պտղածնեսցի :

խի֊

Օգ աննշան՝ անտես ինչ դրի ,
որ սայ ոգի՝ յըրօտս երկրի •
խոնաւուԹի՝ ուռգանի ,
հոյն ՚ի գեաոց՝ յամսոց երկնի :

խի֊

խիթ .

Հուր տարրացեալ՝ յամենայնի ,
աներևոյթ՝ երևեչի .
զաշխարհ տածէ՝ անձախեչի ,
ընդ արևակն՝ ակն աշխարհի :

Ճ .

Թէ ոչ և քո՝ ակըն փակի ,
տեսեր զխմաստ՝ անժխտեչի .
զի հարկաւորն՝ որ եր քեզ մի ,
զօգուտ , զվայելս՝ կուտեսաց 'ի մի :

Ճ ա .

* Այլ ես սրարդեմ՝ ըզպանծալի ,
ըզաս կենաց՝ զայս լիուլի .
Թէ խոստանայք՝ դուք յատենի ,
դու անաչառ՝ 'ի լուր բանի :

Ճ բ .

Բայց արդ՝ ո՞ արք , դողջեք յայանի ,
ոչ կեանք խնդրին՝ երանեչի .
որչափ վիճակ՝ կենացս տանի ,
յայս անցաւոր՝ ճանապարհի :

Ճ գ .

Առ այս կարծէք , բան շատ սլիաի ,
որ բազմազբաղ՝ միշտ հոգալի .
զօր ամ ծախեալ՝ 'ի հոգս ,
հանգչեք իսկ ոչ՝ 'ի գիշերի :

Ճ դ .

ՏԴ .

Ո՛չ, զ՛ն և զ՛ն, այլ՝ յիշէլի,
անսուտ Բանին՝ առած բանի .
Չէ՛ ձեզ զբազմօք ըզբաղէլի,
արտ սակաւ ինչ՝ պիտոյ լինի :

ՏԵ .

Փաղ տարսոնեան՝ ՚ի նոյն բերի,
ձայն և իմաստ՝ Թարգմանէլի .
ունիմք հանդերձ և ուտէլի,
արդ շատասցո՛ւք . զլի՛նչ աւէլի :

ՏԶ .

❖ Տաս անաչառ՝ որ քեզ Թո՛ւնի,
ընդ հակառակ՝ պատասխանի .
Այդ բանք անկ ե՛ն՝ ճգնաւորի,
չասեմ՝ յեօին՝ չքաւորի :

ՏԷ .

Ես մեծատունս՝ և մեծազգի,
արժեմ ունել՝ շատ աւէլի .
ոչ կարօտիմ՝ հարկաւորի,
այլ իմ ճիգն է՝ յօգտակարի :

ՏԸ .

Չէ՛ անսլառչաճ՝ ընդ պիտանի,
հաճոյք, վայելք՝ որ զբօսալի .
և այս իսկ է կեանք աշխարհի,
յորմէ զրկեալն՝ զո՛ւր ծնանի :

ՏԹ .

ՏԹ .

Ք Կարծեմ, բանիւք՝ թողիս քաջուս,
 իբրև գիտակ՝ խօսիս գրոց .
 ուր են զբօսանք՝ ծով ալեկոծ,
 զայն գու անձինդ ընտրես յայժմուս :

կ .

Այլ հարցանեմ, տուր իրաւունս,
 որ չես տգէտ, այլ՝ առ գիտունս .
 յի՞նչ հաստատի՝ ըստ քո հաճոյս,
 օգուս, վայելք՝ աշխարհայնոց :

կւ .

Ի հոգս արդեօք, ՚ի տարակոյս,
 եթէ ՚ի սիրտ՝ դիւր՝ անըզբօս .
 ՚ի վայելիւ, յորս են ՚ի գոյս,
 թէ ՚ի կարծիս, կամ թէ ՚ի յոյս :


կք .

Նախ՝ ՚ի վայելս, ասես, ոգւոյս,
 զոր ՚ի ձեռինս՝ են, ըստ հաճոյս .
 դարձեալ ՚ի յոյս՝ հանդերձեւոց,
 յոր թէ հասից՝ անտարակոյս :

կդ .

Խնաստու թի՛ք՝ սրտատախանւոյս,
 և ես հաւան՝ ՚ի քոյդ եմ կոյս .
 երջանկու թի՛ն՝ կախի զերկուցս,
 այլ զննեսցնւք՝ զարդիւնս ՚ի փորձ :

կե .



կԴ .

Ո՞ր, աղաչեմ, վայելէ յայն,
որ 'ի ձեռին՝ իւր կանն և մնան .
այր մեծատուն, իշխանական,
եթէ աղքատն, և սոսկական :

կԵ .

Այր ի անունն՝ ազնունական,
եթէ գեղջուկ, և շինական .
և 'ի վիճակ՝ քաղաքական,
անդ 'ի միջի՝, թէ յարունարձան :

կԶ .

Ահա տեսիլ՝ քեզ մեծատան,
կենդանագրեալ՝ յայս խաղատան .
ծփի 'ի ծովս՝ զօր ամենայն,
յալիս ծովու՝ աշխարհական :

կԷ .

Ո՞չ արկանէ՝ խարխոս ինքեան,
նաւահանգիստ՝ զի՞նչ, չետես զայն .
զի՞նչ կեանքն իցէ՝ անդէտ անդամ,
կենաց ըզպէտս՝ ասէ, հոգամ :

կԸ .

Բազմախորտիկ՝ նորին սեղան,
աշտուճ հացի՝ չունի ըզհամ .
ուր ըմպելիք՝ են բազմազան,
չիք համ, ըստ ջուր՝ ախորժական :
կԹ .

կթ .

Թող զ'ի խառնից՝ յոլով ըղղեան ,
 ուր սարգուծին՝ է կենսական .
 Թող զճառայից՝ զանսկետ խուժան ,
 յորոց յոլովք՝ են դաւաճան :

է .

Թողում ըզճախս՝ ունայնուծէ ,
 ընդ որ յուտել՝ սիրտք զայրանան .
 զի գոյ և ախս՝ ագահուծեան ,
 որ նախ կրճէ զուտելին զայն :

հւ .

Թէ ախտ յաղծեաց՝ անյագուծէ ,
 ոչ բաւեսցէ՝ Յ համայն .
 Թէ ըստ քմաց՝ չեղև մի բան ,
 անհամանան՝ որ ինչ այլ կան :

հք .

Թողում, զի չիք դեղ և դարման ,
 ուր չիք ճաշակ՝ 'ի քո բերան .
 երբ մտք յածին՝ 'ի հոգս այնքան ,
 որ ոչ Թողուն՝ և 'ի սեղան :

հդ .

Յաւիմ չէ անցս՝ սովորական ,
 յառնել սովեալ՝ վաղ անագան .
 յորժամ կոչիս՝ յարքունական ,
 գործ կարևոր , կի՞մ ախրական :

հե .

հԴ .

Ձե՛նչ ասացից , ո՛ւր այլք մախան ,
 յորժամ կոչես՝ յայլոյ սեղան .
 ո՛ւր են խրախուճք՝ այնչափ անհամ ,
 որպէս կոչուճք՝ օտարական :

հԵ .

Կեղծաւորիս՝ խնդալ ընդ այն ,
 զի սլատոճեսցի՝ կոչն այն յինքեան .
 բռնադատիս՝ դու բազմական ,
 սակաւ ուտել՝ քան զոր սլատկան :

հԶ .

Թէև հարկէ՝ կոչնատէրն այն ,
 սուտ դոհանաս՝ լիաբերան .
 փառք ԽՅ՝ սակաւ տոճան ,
 ուր մարդ առ մարդ՝ շնորհըս կալան :

հԷ .

Թէ անսացեր՝ շատ հրաւիրման ,
 կամ թէ արբեր՝ լի բաւական ,
 բազմասպատիկ՝ չարիք հորդան ,
 տան անդանօր՝ քան թէ ՚ի տան :

հԸ .

Ե՛ զի կադես՝ յարբեցութեան ,
 կի՛մ թշնամանս՝ առնես ՚ի բան .
 կամ մոռանաս՝ և զատախճան ,
 յարգել կարգօք՝ զայս այր և զայն :

հԹ .

ՀԹ .

Կամ աւերի՛ սիրտ քո յինքեան ,
 և այն կրկին՝ յոյժ զանազան .
 ուր ըստամօքս՝ ոչ տանի զայն ,
 զոր խճողել քեզ հարկ ք եդան :

ձ .

Եւ ոչ ոգիդ՝ ժուժէ ընդ այն ,
 զի անարգանք՝ ուստեք անկան .
 քանզի անձինդ՝ ես պատուհան ,
 կարծեօք տանջես՝ քան իրական :

ձԹ .

Այլ առաւել՝ քան զամենայն ,
 յորդանց կրժիս՝ ադահուժեան .
 զի յետ աւուրց՝ քեզ անկ նայնքան ,
 առնել կոչունս՝ իբր ՚ի փոխան :

ձՔ .

Տես աստանօր՝ հոգք յաւելան ,
 անկարծելիք՝ և տարաժամ .
 լաւ և սքան զիս՝ գիտես զայդ բան ,
 Թողից յայտնել , գաղտնիք շատ կան :

ձԴ .

✠ Ո՛րպէս և է , Թող գովեսցին ,
 սեղանք մեծաց , և օրհնեսցին .
 միայն զաղքատս՝ մի մոռացին ,
 իցէ՞ Թէ զիմ՝ միտս իմացին :

ձԴ .

ձԴ .

Ո՛չ զայն ասեմ՝ զինքնին յայտնին ,
 ըզպատուհիրեալն՝ յաւետագրին ,
 թէ քոյդ կոչունք՝ առատասցին ,
 առ կարօտեալս՝ աւուր հացին :

ձԵ .

Եւ ո՛չ դարձեալ՝ զոր անդ ասին ,
 երանութիք՝ աղքատ դասին .
 ք երանեալ՝ զազարոսին ,
 զոր միշտ յիշէլ՝ պէտք են մեծին :

ձԶ .

Այլ յուշ առնեմ՝ ըստ նախ բանին ,
 թէ երանեա՛ պարզ սեղանին .
 ռեզան օրհնեալ՝ աղու հացին ,
 որ քաղցրանայ՝ քաղցեալ անձին :

ձԷ .

Ուր այր ունակ՝ բաւականին ,
 հացի անուճամբ հարկաւորին ,
 բրդէ որդւոց՝ զայն խնդագին ,
 և ինքն՝ ուտէ զուճարթագին :

ձԸ .

Ըմպէ զՋուր՝ անոյշ , անգին ,
 առնու ճաշակ՝ մեղու , կաթին .
 և շատանայ՝ յինքեան ոգին ,
 զի ո՛չ ցանկայ՝ յայլ առ օրին :

ձԹ .

ճԹ .

Թէ կից ունի՝ ինչ մի չնչին ,
 մինչև 'ի սոխ՝ լէ խատորին ,
 կամ ձուկն աղի՝ զոյգ փոխնդին ,
 կամ միրգ սահաւ՝ լէ բանջարին .

Ղ .

Արքայական՝ սեղան նորին ,
 համարեցաւ , է գլխովին .
 ուրախանայ՝ անդ ընտանին ,
 իբր լէ կոչունս՝ յաւուր զատկին :

ՂԱ .

Ո՛չ տատամսին՝ հայր , մայր , այր , կին ,
 բաց 'ի հոգոյ՝ հացին կրկին .
 զոր և խնդրեն՝ լէ զաւակին ,
 և միշտ առնուն , ո՛չ պակասին :

ՂԲ .

Սոքա այսպէս՝ արք քաղաքին ,
 այր սոսկական , այր շուկային .
 ևս առաւել՝ նախանձեւին ,
 պարզ շինական՝ գործօլ յանդին :

ՂԳ .

Հաց գտանէ՝ քրտանց իւր գին ,
 ջուր բարեհամ՝ յաղբերակին .
 յետ այնորիկ՝ կայթէ ինքնին ,
 մեծ պարէ պար՝ ինքն առանձին :

ՂԴ .

զԷ .

Արինք բլուրք՝ անդ սարակցին ,
հողմահարեալ՝ տնկովք , ուժգին .
խի ընտանեաց՝ ար գլխովին ,
է թագաւոր՝ 'ի մէջ նոցին :

զԸ .

Յածին ը դաշտ՝ մարգագետին ,
ակունք , ծաղկունք՝ յակնթագին .
հային յերկիր՝ հային յերկին ,
փառս ան՝ տան արարչին :

զԹ .

Հովիւք՝ ոչխարք՝ 'ի միասին ,
անդ մակաղին՝ յերեսս դաշտին .
ամարանոց՝ անդ արքունին ,
վարսաւորաց՝ է հովանին :

զՁ .

Եւ ուր կտուրք՝ խաշանց լինին ,
գիւղ ը գիւղից՝ ուրախակցին .
ծնունդք հօտից՝ երբ արձակին ,
ձայնք օրհնութեց՝ վերառաքին :

զՒ .

Ուր կաթնօքեր գայցէ ըստին ,
ուրախութի՝ մեծ առ տնին .
մանկունք խայտան՝ առ ծնողին ,
սէր և կողի՝ կապեն յուզին .

Ա

զՒ .

դլժ .

Երբ այդեկուծք՝ իցեն յայդին ,
 տօնահանդէս՝ մեծ աշխարհին .
 հնձանահարք՝ ծափեն յոտին ,
 հնձանատեարք՝ խաղան յափին :

Ճ .

Տարաշխարհիկ՝ արք հիւրք եկին ,
 եղբայրաբար՝ փոյթ ինդակցին .
 քաղաքացիք անդ հանդիպին ,
 օտարահանք՝ բայց մեծարին :

ՃԹ .

Մերդք 'ի դրախտէն՝ ճեպով քաղին ,
 ուրախ առնել՝ զերեսս նոցին .
 սոքա կարօտք կարօտագին ,
 խնդան , պարտէզ՝ դալար տեսին :

ՃՐ .

Թէ հաւ տեսին՝ կի՞ զաղաւնին ,
 դնոց գնեն՝ մայր ընդ ձագին .
 Թո՛ղ զայլ պաճար՝ չորքոտանին ,
 որով քաղաքք՝ և բուծանին :

ՃՏ .

Ընդ այս վիճակ՝ շատք նախանձին ,
 այլ ո՛չ յանկէ՝ ոք իւր անձին .
 գէթ խոստովան՝ յայժմուս լիցին ,
 Թէ ասացաք զերաւացին :

Բ

Յ

✠ Յառ .

ՃԴ .

* Յառնէ ընդդէմ՝ այր փափկակեաց ,
 լուեա՛ , ասէ , ես խօսեցայց .
 այդ տառապեալ՝ կեանք աղքատաց ,
 ո՛չ արկանէ՛ շատ ինձ նախանձ :

ՃԵ .

Ուր ես ընչիւք՝ եմ մեծագանձ ,
 առնեմ զամէն՝ մեծ ըղբօսանս .
 ձիովք՝ կառօք՝ և նաւակօք ,
 յո՛ և կամիմ՝ ուղղեմ զընթացս :

ՃԶ .

Ստես բաղնօք՝ ո՛ւնդիտանաս ,
 կամ զոր գիտես՝ հի՛մ ուրանաս .
 զոր շօշափել՝ քեզ ձեռօք տաց ,
 քո բերանով՝ զքեզ դատեցայց :

ՃԷ .

Նախ՝ թէ առնես՝ զայդ սնբամբաս ,
 հաստատեցեր՝ դովին զիմ բանս .
 զի նախանձեալ՝ արանց գեղջկաց ,
 անձուկ ունիս՝ նոցին վայրաց :

ՃԸ .

Դարձեալ՝ ասես՝ բերանաբաց ,
 'ի գիւղ երթայց՝ օր մի հանդեայց .
 ապա յայտ է՝ զի ուր միշտ կաս ,
 միշտ տառապիս՝ 'ի մէջ վշտաց :

ՃԹ .

ՃԺ .

Գարձեալ ասես՝ առ ընտանեակս ,
 չիք իմ գրամ՝ յաւելորդաց .
 առ 'ի լինել' մեզ դիւղագնաց ,
 յայս ամ՝ յորում չիք մեր շահած ։

ՃԺ .

Ահա տեսեր՝ զոր խոստանաս ,
 առնել անգամ՝ անկարանաս .
 Թող ըզվտանդս՝ ճանապարհաց ,
 Թէև գնաս , ոչ անկասկած ։

ՃԺԽ .

Մի պարծեսցի՝ ոք յերկրածնաց ,
 երթևեկել՝ հեծեալ՝ նստած .
 որ զփորձ ետես՝ երկվարաց ,
 անկաւ երբեմն՝ և 'ի կառաց ։

ՃԺԲ .

Իսկ ըզփորձանս՝ ձեր նաւակաց ,
 ստէս պատմէք՝ դուք իրերաց .
 մինչ զի ը ծով՝ համատարած ,
 ես ոչ տեսի՝ զայնչափ արկածս ։

ՃԺԳ .

Ուր այր աղքատ և շինակեաց ,
 ոտամբ չափեն՝ շէնս և դքաղաքս .
 և ուր կամին , հանդչին լը կամս ,
 ուր ախորժեն՝ կան 'ի սփոփանս ։

B 2

ՃԺԴ .

ՃԺԴ .

Զի ոչ վարին՝ և ոչ բերին,
 ուր սակ կայցէ՝ ձիոց կառաց,
 այլ ինքնիշխան՝ ինքնաբերին,
 ինքնավճար՝ և ինքնասպաս :

ՃԺԵ .

Կայ այլ սրտաճառ՝ ոչ մոռացայց,
 դու զայն յիշեա՛ միշտ անմոռաց :
 ԲարօրուԹԻ՛ մարդոյս խնդրած .
 պարտի լինե՛լ՝ հասարակաց :

ՃԺԶ .

Որպէս՝ զարե տէր ոչ ժխտեաց .
 և ոչ զանձրե՛ բարեաց՝ չարաց .
 որ ինչ պահի՛ լուկ իշխանաց,
 չէ՛ անկ մարդոյ՝, այլ՝ սրտահեաց :

ՃԺԷ .

Արդ ո՞ր և ո՞վ՝ ինձ համարեաց,
 իցէ յաշխարհ՝ առատագանձ .
 զի մարԹասցի՛ վատնել լը կամս,
 Թէ՛ ՚ի գրգանս՝ Թէ՛ ՚ի զբօսանս :

ՃԺԸ .

Ուր հարկաւոր՝ պէտք լը անձանց,
 են գիւրագիւտ՝ փոքունց՝ մեծաց .
 միայն պիտի գիտել զառած,
 Թէ՛ հարկաւորք՝ կան անսպակաս :

ՃԺԹ .

ՃԺԹ .

Արդ որ ձկտի՛ յոր չի՛ ձեռնհաս,
 յայտ է, լինի՛ անգոհ՝ ցաւած .
 և այս իսկ է՛ պատիժ մեղաց,
 որոց ցանկան՝ աւելորդաց :

ՃԻ .

Այա ուրեմն՝ խոստովանեաց,
 թէ կարեւորքն՝ են մեր բուն հաց .
 իսկ աւելորդք՝ կացցեն՝ ՚ի բաց,
 թէև կայցեն՝ ըստ քո քմաց :

ՃԻԱ .

՚ի բաց կացցեն՝ ասեմ՝ ՚ի բաց,
 փուշք խոցոտիչք՝ աղգք մեծութեց .
 ՚ի բաց կացցեն՝ աղգք դրգանաց,
 նիւթք՝ նորանոր՝ հիւանդութեց :

ՃԻԲ .

՚ի բաց կացցեն՝ ախտք հեշտութեց,
 կորուստ հոգւոյ՝ մարմնոյ իսկ մլասս .
 երթ ցանկութի՛ բացէ՛ ՚ի բաց,
 հասարակաց՝ դու չա՛ր օրհաս :

ՃԻԳ .

՚ի բաց լիցին՝ ՚ի լաւ յարկաց,
 ծախք աւելորդք՝ կործանիչք տանց .
 ՚ի բաց լիցին՝ ՚ի քո՛ ՚ի դրաց,
 որք նորութեց՝ բերին՝ ՚ի սպաս :

ՃԻԳ .

Խենեշ զարդուց՝ գիւտք նորարծարծ .
 և նորաձև՝ ընթացք կենաց .
 սին երևոյթք՝ սլաճուճանաց ,
 առ երևիլ՝ այբ բարեկեաց :

ՃԻԵ .

Որինչ և ես՝ այն երևեաց ,
 որով լինիս՝ արդարակեաց .
 Թէ չափաւոր՝ քեզ տէր կշռեաց ,
 Թէ ճոխագոյն՝ նոյն սարդակեաց :

ՃԻԶ .

Սովիմբ անուն՝ մեծ ստանաս ,
 որ սատուականն՝ է ՚ի բարեաց .
 ասլա թէ ոչ՝ սուտակասսլա ,
 ո՞ր է՝ ոչ ոք՝ սչ գուշակեաց :

ՃԻԷ .

* Բայց ո՞ր կարէ՝ ժխտել , ասես ,
 ըզլաւութիս՝ իրաց սէսսէս .
 զոր ակն ուրուք սւր և ետես ,
 ցանկայ հարկաւ՝ բնաւորասսէս :

ՃԻԸ .

Ո՞չ և հաստիչն՝ զսոյն հանդէս ,
 որդւոց մարդկան՝ ետ ՚ի վայելս .
 զոսկի՝ զարծաթ՝ զգոհարեղէնս ,
 զմեռաքս , և զայլ՝ նիւթս ՚ի հանդերձ :
ՃԻԹ .

ՃԻԹ .

Այս այո՛ գիտեմ և ես ,
այլ իմանամ ո՛չ ես քո սէս ,
զի՛նչ տանըն տնտես ,
ինքն է միայն՝ չեմ ես՝ դու չես :

ՃԼ .

Ե՛ն որ կարգին՝ յառենից սէտս ,
զայն չարգելու՛նք ունեւ զքեզ .
այլ զոր ոմանց՝ ետ ՚ի պարգևս ,
զոչքեզ տո՛ւնեալն՝ աննախանձ տես :

ՃԼա .

Արա թէ ոչ՝ խկոյն լսես ,
ընկեր՝ ո՛չ ես զըկեմ զքեզ .
խկ թէ առ այլ՝ առտու եմ ես ,
ես բարի եմ, դու չարակն ես :

ՃԼբ .

Քանզի այս է՝ վայելչասպէս ,
զարդ աշխարհի՛ կարգ , տան անտես .
ուսեմն ունեւ՝ շատ մեծասպէս ,
այլու՛մ չափով՝ ՚ի նոյն ասէս :

ՃԼգ .

Ոմն է երկայն՝ հսկայատես ,
այս ոք միջակ , զայն կարճ գոցեա .
սա գեղասղանձ և փափկերես ,
նա ըստ լիայ՝ թէև երէց :

ՃԼԳ .

Սա քաղցրաձայն՝ քնար կարծես ,
 նա զօղանջէ՝ պղնձապէս .
 դա զօրաւոր՝ դո՛ւք տրդատէս ,
 այն դք անզօր՝ քան զլծերսիտէս :

ՃԼԵ .

Ո՞չ և ծաղկանց՝ որակք պէսպէս ,
 գուճակ գուճակ՝ և ո՛չ նոյնպէս .
 նոյն և սրտոց՝ այլազգ համտես ,
 պէսպիսութի՛ն զարդ՝ ՚ի հանդէս :

ՃԼԴ .

Արդ թէ ցանկաս , որ ոչ անկ քեզ ,
 զսահետ վարեալ՝ զածնըդ հաշես .
 դու վայելեա՛ն՝ զոր ժառանգես .
 առաւելու , ո՛չ պակասես :

ՃԼԵ .

Մի խաբեացիս՝ եւայասպէս ,
 ձկաթիլ ՚ի ծառ՝ արդելեալ քեզ .
 չսփանաս՝ կորուսանես ,
 զերջանկու՛թիդ՝ յոր վայելես :

ՃԼԸ .

Արծաթ ոսկի՛ն չունել կարծես ,
 ո՛չ տեսանել ականս պէսպէս .
 զի՞ ոչ հայիս՝ յերկնից աստեղս ,
 որոց նման՝ գոհար անտես :

ՃԼԹ .

ՃԼԹ .

Ձգեղ ծաղկանց՝ 'ի դաշտերես ,
 սողումնին՝ չունէր հանդերձ .
 զգեղ Թռչնոց՝ ձայնի՛ն հանդերձ ,
 հրեշտակային մարդ ոք չէտես :

ՃԼԸ .

Յաշխարհ՝ 'ի մեծ՝ գիտեա՛ բնակես ,
 քո են ողջոյն՝ զոր տեսանես .
 այլ յիմ ո՛չ վայելես ,
 Թէև իշխան՝ բոլորից ես :

ՃԼԹԱ .

Ձի և արքայ՝ ում՝ երանես ,
 ո՛չ վայելէ՛ շատ քան ըղբեղ .
 Թո՛ղ զիւր արդէլս՝ որ 'ի դահէս ,
 Թո՛ղ և զերկիւղ՝ որչափ մեծ ես :

ՃԼԹԲ .

Մարդ չափաւոր՝ այսչափ Թիղ ես ,
 չափով առնուս՝ և զոր դիղես .
 'ի մանանայն՝ զօրինակ տես ,
 է հաւասար՝ յորժամ չափես :

Հ Ա Տ Ո Ւ Ա ծ Գ :

Կարևորագոյն պէտք Բանական Կենդանաց
յաստի կեննս :

Ճխոզ .

Այլա չափն է՝ կանոն միակ ,
ուղղիչ մտաց՝ մերոց անյառ .
կալ 'ի ձեռին՝ չափ զվիճակ ,
տէս զիմ՝ անհակառակ :

Ճխոզ .

Չափ բաւական՝ յծառսք ,
գոչ բաւական՝ որովք առաք .
չափ բանական՝ տրամաբանեակ ,
ոչ ամենայն՝ գոչ նոյնքանեակ :

Ճխե .

Մի նախանձիր՝ չ մեծ դիտակ ,
զոր ետ իմ՝ ինք բացարձակ .
Մի նախանձիր՝ ընդ մեծ դիպակ ,
զոր պահանջէ՝ քանակ քատակ :

Ճխզ .

Այս իմ, զոր ասացաք ,
ընդունելի՝ 'ի միտս յստակ .
իսկ որ սղտորն՝ է , և խառնակ ,
Թող 'ի սրտին մտցէ սենեակ :

Ճխէ .

ՃԽԷ •

Յայնժամ տեսցէ, անպատրուհակ,
 ուն և էն՝ զանձն այլանդակ •
 այնուհետև՝ ոչ դժկամակ,
 լինի լէ բան՝ անձին ուղղեակ :

ՃԽԸ •

Անդ անցանէ՝ նա անսայթաք,
 'ի փրուհեան՝ յայտնին առակ,
 թէ ոչ հացիւ հեայ միայնակ,
 մարդ՝ որ ունի լինել հրեշտակ :

ՃԽԹ •

Հաց հարկաւոր՝ մարմնոյ, լուաք,
 և զամ՝ 'ի նոյն գտաք •
 եթէ մարմին լու լինէաք,
 ոչ կարևոր այլ խնդրէաք :

ՃԺ •

Իսկ արդ հոգի առընկալաք,
 լծանման, բանիւ պատուէալք •
 ոչ ապաքէն՝ խնդրել մեզ հարկ •
 զինչ հարկաւոր՝ առ սորին յարդ :

ՃԺԱ •

Քերթողք ստողք՝ բազմօրինակ,
 յոտս անդ բանին՝ կապին համակ •
 ջամբել մարդկան՝ գողցես կճղակ,
 զի յագեսցին՝ գող, բանականք :

ՃԾԲ .

Այլ է խորհել՝ առնել մեծ հարկ ,
սովեալ լքան՝ անդ կոչնականք .
հին առասպելք , մարդիկ անկարգք ,
են գերագոյն՝ անդ օրինակք :

ՃԾԳ .

Խենեչ զրոյցք՝ միտք խոտորնակ ,
'ի նոյն սեղան՝ աղնիւ բաժակ .
արբեալ հոգւով՝ զեղխին համբակք ,
որ մտանեն՝ յայն հանգանակ :

ՃԾԴ .

Եւ մեք ահա՝ յայս օր հասար ,
յորում եղծաւ՝ ամէն հասակ .
բանաստեղծից՝ յարգին գրեանք ,
որովք աշխարհս՝ կայ 'ի վտանգ :

ՃԾԵ .

Վո՞ այն և մեզ՝ եղև մեծ հարկ ,
ծանուցանել՝ զչափ և զքանակ .
և՛ս առաւել՝ 'ի բանս զորակ ,
որ շահեկան՝ մտաց ճարակ :

ՃԾԶ .

Ուստի ծնցի , զոր երկնէսք ,
Թէ հարկաւոր սխաին մեզ բանք .
անդ օգտակարք , վայելչականք ,
դէսլ ժամ ունին , և ժամանակ :

ՃԾԷ .

ՃԾԷ .

✱ Եւ արդ ուլ մարդ՝ դու բանաւոր ,
 նախ բանն է քեզ՝ յոյժ կարևոր .
 բան ուղղական՝ որ է բնաւոր ,
 ներարամագրեալ՝ անճատուր :

ՃԾԸ .

Եւ ի կարգի՛ բան ձայնաւոր ,
 Թարգման սրտիդ՝ և հեշտալուր .
 նորուն բազուկ՝ աջ զօրաւոր ,
 իմաստակիր՝ բանըս գրաւոր :

ՃԾԹ .

Ահա քո գանձք՝ ճիս մտաւոր ,
 առ վայելեան զամենայն օր .
 սոքիմբք հարուստ՝ ես զօրաւոր ,
 և մեծաշուք՝ քան զթագաւոր :

ՃԿ .

Բանն առաջին՝ ներանձնաւոր ,
 արթուն պիտի՝ հանապազօր .
 ներգործական՝ և ասուոր ,
 միշտ բարեբեր՝ արգասաւոր :

ՃԿԱ .

Ապա թէ ոչ՝ անասուն նոր ,
 գոգջնր զմարդ՝ ՚ի քուն միշտ խոր .
 այլատեսակ՝ գաղան անլուր ,
 որ ոչ ուղիղ , վազվազէ թիւր :

ՃԿԲ .

ՃԿԲ .

Բանի լեզուս՝ կեանք իւր բոլոր ,
 զի է մոլի , և ախտաւոր •
 Խաւարասէր՝ մտամոլոր ,
 Ճրագ բանին՝ չիք , խլուրդ կոյր :

ՃԿԳ .

Այլ է և այն՝ որ կամակոր ,
 'ի բանս անգամ՝ անբանաւոր •
 Կամ յովազի աչք զօրաւոր ,
 առ 'ի չարիս՝ բացեալ բոլոր :

ՃԿԴ .

Յերկար լինի՝ ինձ աստանօր ,
 զայս անբանից Թուճեւ ջոկ նոր •
 շատ է գիտեւ , ո՛ր կայցէ , ո՛ւր ,
 մի մերձեանար՝ յայն ցեղ յահուր :

ՃԿԵ .

Այլ խնդրեսջիւր զայր բանաւոր ,
 որ է բանի՛ւ արդիւնաւոր •
 առաքինի և անխոտոր ,
 առաջնորդեալ 'ի կեանքս իւր :

ՃԿԶ .

Զի այս սլատոճէր՝ քեզ հարկաւոր ,
 զոր միշտ լսես՝ առակաւոր ,
 Թէ որ կապի՝ ընդ նման իւր ,
 առօղ բարուց է մասնաւոր :

ՃԿԷ .

ՃԿԷ .

Յիշատակեմք քեզ աստ զանձնիւր ,
 զընթացս լաւաց՝ արժանաւոր .
 որոց և լոկ՝ բարի այն լուր ,
 անձինդ լինի՝ բարեաց յորդոր :

ՃԿԸ .

✠ Պարծանք բնութեա՝ են մարդկայնոյ ,
 մարդիկ ՚ի բնէ՝ բարեբարոյ .
 այլ սլանծագոյն՝ յաղթական դոյ ,
 առաքինին՝ ՚ի կրթելոյ :

ՃԿԹ .

Երկուցս ՚ի յի՝ զոյգ եղելոյ ,
 գիւցազն անուէն՝ արժան , արդոյ .
 զի կրթութի՝ բնութե բարւոյ ,
 գերաբնական՝ ցոյց տայ ոգւոյ :

ՃԿ .

Առ օրինակ՝ քեզ ՚ի գեղոյ ,
 որ գեղապանծ լինի զարդու .
 աբխողով՝ չքնաղ այն ,
 այլ և՛ս չքեղ՝ փայլմամբ շքոյ :

ՃԿԱ .

Մինչև գոգցես՝ գեր քան զմարդոյ ,
 զոճարթատեսիլ՝ գեղ էր զոճարթնոյ .
 եթէ նոյնպէս՝ լինէր ներքոյ ,
 մեք ասէաք , նմանն ո՛չ գոյ :

ՃԿԲ .

ՃՔԲ.

Ձե՛նչ շահ, տգեղ՝ էր լը ոգւոյ,
սատան՝ քդէմ՝ և հօր իւրոյ.
որ և կորեալ՝ յսակեհերոյ,
դի շատ մնաս է գեղ մարմնոյ:

ՃՔԳ.

Իսկ զե՛նչ, որոց չէ՛ փոյթ զհոգւոյ,
սին սլաճուճեն՝ զոր արտաքոյ.
մինչ երևիլ՝ այլ ընդ այլոյ,
ուր կարծէին՝ թուիլ հաճոյ:

ՃՔԴ.

Ձի խանգարիչն՝ անձին գուհոյ,
այլագունի՝ լը ծաղրեւոյ.
որմոյ նման՝ սուտ բռեւոյ,
յայանէ զնեքինս՝ իւր, արտաքոյ:

ՃՔԵ.

Արդ որ բնութե՛ն՝ պակասեւոյ,
է վիճակեալ, կամ արատոյ,
շատ է պահել՝ զանձն՝ ի չափու,
որով արժան գոյ գթալոյ:

ՃՔԶ.

Այլ չէ՛ իմ բան՝ աստ զայսպիսւոյ,
պակասամիտ՝ ՚ի ծնէ եւոյ.
այլ որ ունի՝ լը կարեւոյ,
ըզբանաւոր՝ խելս զմարդոյ:

ՃՔԷ.

ՃԿԷ .

Սա կրթանօք՝ անձին իւրոյ ,
 միշտ զարգանայ՝ յընթացս բարւոյ .
 Թէ ընդ ծննդեան՝ սնունդ պիտոյ ,
 պէտք են նոյնպէս՝ անձին փուլթոյ :

ՃԿԸ .

Այսպիսորէն՝ առաքինւոյ ,
 Լէր նախանձօղ , մեղ ինչ ոչ գոյ .
 այլ առաւել՝ նախանձաւոր ,
 Լէր , 'ի լաւաց լաւ , ընտրելոյ :

ՃԿԹ .

✱ Ասեա , ո՛րքան և ո՛ր բարի ,
 անկ ինձ առնել՝ բանաւորի .
 առ 'ի լինել՝ առաքինի ,
 մարդ կատարեալ՝ լը իմ կարի :

ՃԿՁ .

Քսուքեղ ճշդել 'ի քուժ՝ կշուի ,
 զանչափուլթի վերին շնորհի .
 արս , ո՛րչափ կարես՝ բարի ,
 տացի առնել դէր լը կարի :

ՃԿՁ .

Զի չափ հոգւոյ , հոգւորի ,
 չէ՛ ըստ մարմնոյ , և աշխարհի .
 ուր որ ուտէն , կի՞ որ ըմպէն ,
 յադի , չառնու՝ այլ աւելի :

ՃԿՁ .

ՃՃԲ .

Եւ որ յայս ինչ պաշտօն բերի ,
 ոչ արտաքոյ՝ յայլ ինչ վարի .
 ապա թէ ոչ որ շատ ձկտի ,
 և ոչ ՚ի չափ մի հասանի :

ՃՃԳ .

Այլ է պատիւ , գործ արքունի ,
 այլ տուրեւառ ՚ի վաճառի .
 ոչ ոսկեգործ՝ կարող լինի ,
 կարել հանդերձ լի դերձակի :

ՃՃԴ .

Ո՛չ վաճառող և մարդարտի ,
 հացավաճառ լինել կամի .
 Ճարտարասլետ ՚ի շինոճածի ,
 ճարտարախօս չէ՛ յատենի :

ՃՃԵ .

Ո՛չ որ որսայ ձուկն ՚ի ծովի ,
 նա ուռկանէ զթուչունս վայրի .
 ոչ կառննթաց ՚ի ցամաքի ,
 խաղայ լի ջուրս ղեկօք նաւի :

ՃՃԶ .

Ո՛չ մեծատան , ոչ աղքատի ,
 վիճակք խառնին , բայց լի բախտի .
 և ոչ կարճիկ ընդ հսկայի ,
 յ՛ոյժ և ՚ի զգեստ՝ հաւասարի :

ՃՃԷ .

ՃՃԷ .

Են ոտք արագ սուրհանդակի ,
 և են դանդաղք՝ անբերելի .
 ոմն անվեհեր՝ առիւծ թու՛նի ,
 ոմն անարի յամենայնի :

ՃՃԸ .

Արագամիտ սա կորովի ,
 նա բու՛թ մտօք , որ չուսանի .
 սա պերճախօս՝ ՚ի յօդ բանի ,
 նա գործասէր՝ ժիր և արի :

ՃՃԹ .

Ո՛չ այդ կանոն և կարգ պահի ,
 յառաքինեաց ասպարիզի .
 որ ոք կամի՝ յամէն բարի ,
 յառաջագէմ՝ լինել ունի :

ՃԿ .

Չգաստ մտօք՝ անբուն հողի ,
 ուղիղ կամօք՝ աջողակի .
 ամենարո՛ւետա՝ առաքինի ,
 խոհեմ , արգար , մաքուր , արի :

ՃԿԱ .

Հեզ և խոնարհ՝ գառն երևի ,
 առիւծանայ՝ ուր հարկ լինի .
 նոյն միամիտ՝ ըստ աղաւնի ,
 և խորագէտ՝ օձ Թրուհի :

ՃԿԲ .

ՃԴԲ .

Վէմ հաստատուն՝ ըստ կեփայի .
 'ի գրանց չարին՝ անվանելի .
 սողոս՝ սողոս է յետ դարձի ,
 հոգեվառեալ՝ հրատ ինձ կարծի :

ՃԴԳ .

Ըստ յովհաննու՝ սիրող , սիրի ,
 մարմնով հրեշտակ՝ անախատ յերկրի .
 չարչարազգեաց՝ 'ի հանգիսի ,
 և խաչասէր՝ ըստ անդրէի :

ՃԴԴ .

Հանգոյն յոբայ համբերողի ,
 տոկուն , արթուն , երանելի :
 'Նոր արբահամ՝ հաւատով լի ,
 նոր խահակ՝ հլու լինի :

ՃԴԵ .

Յակոբ խաբօղ՝ սատանայի ,
 իշխէ ընչից , և ոչ գերի :
 Ըստ յովսէփայ ողջախոհի ,
 ոչ պանծանայ՝ և 'ի գահի :

ՃԴԶ .

Երկայնամիտ՝ լի մովսէսի ,
 անգէտ անձինն՝ փառաւորի :
 Յեսու յաղթօղ՝ տէ՛ վառի ,
 յեղիական՝ նախանձ բարի :

ՃԴԷ .

ՃԴԷ.

Ոյր տարացոյց՝ ինքնին յայտնի,
 Թէ նախ անձին՝ իշխան լինի •
 Ղկերըս հոգւոյն՝ ՚ի չափ ունի,
 Բանից ըզգործ՝ վկայ ունի :

ՃԴԸ.

Սք վկայից՝ դաս վերագրի,
 որ անարիւն՝ նահատակի •
 զօր ամ՝ նա մեռանի,
 և է հոգւով՝ միշտ կենդանի :

ՃԴԹ.

Ահա դիւցազն առաքինի,
 ՚ի գովելեաց՝ և գովելի •
 բովանդակեալ ՚ի մի վայրի,
 խորհուրդ և բան և գործ բարի :

ԴԲ.

Սա բանական ինձ կենդանի,
 մարդ կատարեալ՝ ար Յի •
 սք զոճարթնոց՝ այր ցանկալի,
 ամսամերձ՝ նախանձելի :

ԴԳ.

Թէ դժոճարին՝ այս քեզ թոճի,
 տես, ամ գիւրին լինի •
 յորմէ լոճար, լեր կատարեալ,
 հանգոյն հօր քո երկնաւորի :

ԴԷ.

մ ք .

Ո՛չ այս սահման՝ հասանելի ,
այլ յանսահմանն՝ միշտ դիմելի •
է և երկնից ճանապարհի ,
դիւրիւն ընթացք՝ մեզ միածնի :

մ ք .

Գիտեա՛ , տկարն՝ հզօր լինի ,
կարօղ տք՝ յամենայնի •
վազէ և կաղ՝ լը եղջերոճի ,
յերկինս թռչի՛ այս մեր արծոճի :

մ ք .

* Գիտեմ ասեա՛ զընթացս հողւոյ ,
չնորհաց շաւղօք՝ վերբերելոյ •
այլ դու ինձ ցոյց զայն հետս ուղւոյ ,
որ լը բնութե՛ հայթհայթելոյ :

մ ք .

Տուրք են և այն՝ աջոյն վերնոյ ,
այլ մեզ սէտք են հետեւելոյ •
չատ է շահել՝ լը քանքարոյ ,
ահա եղեր դեր՝ ի վերոյ :

մ ք .

՚Ի փորձ հայեաց բնութե՛ լուսոյ ,
ան օրինակ միշտ ՚ի բարւոյ •
զատեա՛ զյարդ ՚ի ցորենոյ ,
կեր զգերմակ հաց ըզնաչոյ :

մ ք .

մ'է .

Խնդրեա՛ զչաւիղս առաքինւոյ ,
 զհետ ընթա՛ առն իմաստնոյ .
 արդիւնաշատ լիջիւր մեղու ,
 կէր , և ջամբեա՛ զարդիւնըս քո :

մ'ը .

Լէր դու բազում՝ ի սակաւու ,
 Եւ ծաղկաքաղ՝ փունջ կաղմելոյ .
 որով ընտրեալ՝ ի մէջ բազմաց ,
 ի սակաւուց՝ գտցիս սարու :

մ'թ .

Լէր դու պղատոն՝ ըստ խորհրդոյ ,
 խոհեմութի՛ խոր հանճարոյ .
 վահագն արի՛ քաջ Եւ ոգւոյ ,
 որ հերակլէս՝ հելլենացւոյ :

մ'ժ .

Արդարադատ՝ հանգոյն կշռոյ ,
 ում օրինակ՝ ո՛ւր ՚ի մարդոյ .
 իսկ բարեխառն՝ հեզ և հլու ,
 սոկրատ ցուցակ՝ քեղ այս ուղւոյ :

մ'ժա .

Նոյն վարժապետ՝ առ ՚ի գործոյ ,
 Եւ արտաքնոց՝ յամէն դասու .
 անայլայլակ՝ նոյնաբարոյ ,
 յիմ անցս՝ գեր ՚ի վերոյ :

մ'ժբ .

մ Թ Բ .

Որպէս զնաւ՝ յերեսս ծովու ,
 կի՛մ իւզ ելեալ՝ 'ի վր՛ ջրոյ .
 առաքինին՝ ծանր լը ոսկւոյ ,
 է վերաթռիչ՝ հանգոյն հրոյ :

մ Թ Գ .

Բայց Թէ խնդրես՝ 'ի մեր դարու ,
 ո՛ր այն նման՝ այսգոյն պարու .
 խնդրեա՛ , գացե՛ս , 'ի տես լուսոյ ,
 դիողինեան՝ լապտեր պիտոյ :

մ Թ Դ .

Տես , մի խաբիր 'ի տես մարդոյ ,
 փորձ 'ի պաղոյն խնդրեա՛ ծառոյ .
 Մի պատրեսցիս՝ լը արտաքնոյ ,
 այլ խնդրեսջեր ըզտես ներքնոյ :

մ Թ Ե .

Այր մեծատուն՝ մեծաբարոյ
 կարծի մարդկան՝ վեր 'ի վերոյ .
 և կի՛մ աղբատ՝ խեղաբարոյ ,
 զի ահնարկեն՝ յահնոց գունոյ :

մ Թ Զ .

Բայց անաչառ ահանըդ քոյ ,
 երևեսցին՝ լը բուն գոլոյ .
 մարդ գտանես՝ լաւաբարոյ ,
 յամէն վիճակ՝ մեծի , փոքու :

Բ

մ Թ Է .

մ Գ Է .

Տեսցես յայնժամ՝ քաջ 'ի փորձոյ ,
զի ցոյց բանին՝ կախի զգործոյ .
ուղղեալն 'ի վարս՝ ղեկաւ հոգւոյ ,
է բանական՝ լը արժանւոյ :

մ Գ Ը .

Խակ որ ունի՝ զանուէն մարդոյ ,
այլ գործք եր՝ գործք անասնոյ ,
պարտ է ասել , փոխեա՛ սով դու ,
կամ զանուէն քո , կամ զգործ քոյ :

մ Գ Թ .

* Սոյնպէս կշռեա՛ ըզբանական ,
և 'ի բանից՝ երկրորդական .
Թէև իցէ՛ քաջ քերական ,
տէս , ուղղախօսն է իւր բերան :

մ Կ .

Ապա թէ ոչ՝ է ապաբան ,
անբանագոյն՝ չար քան զանբան .
զի եղծանէ՛ ըզմի միայն ,
գործի բանին՝ զմարդկու թէ :

միս .

Չիրք առանձին՝ այս , մեր բնութե՛ ,
յայտնել արտաքս՝ ներքին ըզբան .
ձայնիւ՛ , որ է՛ նշանական ,
տրամաբանող՝ իմաստութե՛ :

Գ

Ը

միք .

ՄԻԸ .

Իմաստ սխաի՝ յամենայն ժամ,
 'ի խօսս մարդոյ՝ լը իւր ստյաման .
 որ միշտ օգուտ՝ բերցէ ունկան ,
 կենցաղօգուտ , կի՛հ հոգեկան .

ՄԻԹ .

Աստ թէ ոչ շահ լուութի ,
 է առաւել՝ և սատուական .
 ուր 'ի զրոյցս՝ որ անսխտան ,
 մեծ է մասս՝ քան զամենայն :

ՄԻԴ .

Դատարկ , և սուտ , բամբասական ,
 խօսել՝ լսել , զեան երկոքեան ,
 թո՛ղ զխենեհն , և զչարաբան ,
 զոյր զլեզու՝ կտրել արժան :

ՄԻԵ .

Այլ ես ողբամ՝ զվիճակ մարդկան ,
 որ միշտ 'ի բանս՝ պակասական .
 զի ուր խօսխմբ՝ գո՛գ , հազար բան ,
 տասն է ընտիր , և կամ քսան :

ՄԻԶ .

Վո՞ սոյն երկու՝ ականջք եդան ,
 բայց մի լեզու , միակ բերան .
 բայց են մեզ դրուելք՝ կրկին ունկան ,
 կրկին այլ դրամբք՝ վակ , խօսարան :
 ՄԻԷ .

ՏԸՆՆ .

Ձի 'ի լսեւ' պատրաստական ,
 քան 'ի խօսեւ' կանոն մեզ այն .
 մտցէ այս ինչ՝ յայս լսարան ,
 թէ է անպէտ , ելցէ ընդ այն :

ՄԻՐ .

Չարմանալի՝ փորձ օրական ,
 զի եմք անլուր , շախօսական .
 և առաւել տխմարք 'ի բան ,
 կամին ճառել՝ ամէն ունկան :

ՄԻԹ .

Պակասութէ՝ խելաց նշան ,
 անյագ լինել 'ի խօսս իւրեան .
 և որ լինի՝ դատարկաբան ,
 անգործ , անպէտ՝ է յաւիտեան :

ՄՆ .

Իսկ իմաստուհիք՝ սակաւաբան ,
 են ծանրադին՝ օսկիաբան .
 անձանց՝ բազում , սակաւ՝ մարդկան ,
 միշտ ընդ անձ՝ են խօսական :

ՄՆԱ .

Գարձեալ չափեա՝ ըղքո բերան ,
 զի՛նչ , ո՛րմ խօսիս , զուամէ՛ր , ո՛րքան .
 նախ որոճեա՝ 'ի խորհրդեան ,
 ապա հանցես՝ բան 'ի յատեան :

C 2

ՄՆԲ .

մ'ՆԲ .

Խնդրեա՛յ յառաջ՝ քան զամենայն ,
 ո՛ր կարևոր՝ կայցէ քեզ բան .
 նախ քան զմարմնոյսն՝ է հոգեկան ,
 և 'ի մարմնոյս՝ պէտք ըստ ինքեան :

մ'ՆԳ .

Յետ այս բանից՝ քաջ կատարման ,
 ինքնին այլ խօսք՝ վայելչանան .
 որ առ օգուտ քո պիտե՛նան ,
 և կամ 'ի շահ՝ եղբայրական :

մ'ՆԴ .

Կամ առ 'ի զարդ՝ ընկերու թէ ,
 մարդավայել՝ կենակցու թէ .
 պատշաճաւ որ՝ ու զո՛ւարթաճայն ,
 ուրախարար՝ 'ի խրախու թէ :

մ'ՆԵ .

Վեր մխիթար՝ 'ի արտմու թեան ,
 մի զոք սխրեր՝ 'ի խնդու թեան .
 քաղցր և անոյշ՝ համեղաբան ,
 մի դառն երբէք՝ խաճատական :

մ'ՆԶ .

Թէև սաստես՝ առ խեռ ծառայն ,
 կշիռ և չափ՝ ա՛ռ ծանրու թէ .
 և պարզաբար , միշտ շահեկան ,
 և ո՛չ երբէք՝ բանք քո 'ի զեան :

մ'ՆԷ .

մ՛ւլէ •

✱ Այլ զոր խնդրեմք՝ բան, սլակասի,
 թէ միտ և գրովք՝ ոչ ճոխասցի •
 զի դպրութի՛ն՝ գանձ արքունի,
 իմաստութե՛ն՝ մեծ յարգ ունի :

մ՛ւլը •

Աղբիւր բանին՝ ինքնին բացցի,
 թէ դպրատուն՝ ոչ փակեացի •
 ուր՝ ի բարին՝ միտք կրթեացի,
 և լոյս բանին՝ սլոյծառասցի :

մ՛ւլթ •

Հանճար հողւոյն՝ արդիւնասցի,
 եթէ ուսմամբք՝ ուսուցեացի •
 սք մատենից՝ որ են յարգի,
 և արտաքնոց՝ յիւրում կարգի :

մ՛իս •

Քեզ ապացոյց՝ յարդեանց տացի,
 զի այր անուս՝ տխմար ասի •
 և իմաստուն՝ և մտացի,
 քաջ ուսողաց՝ անուն լսի :

միսն •

Ո՛չ և գրովք՝ եկեղեցի,
 միշտ ծաղկեցաւ, և ծաղկեացի •
 ո՛չ և աշխարհ՝ առ աշխարհի,
 ուսման մարամբ՝ վերադասի :

G 3

միսք •

Մսբ․

Ո՛չ 'ի ծագաց' 'ի ծագս երկրն ,
 գրով գործ մեծ՝ փոյթ վճարի •
 ո՛չ և յերկնից՝ սլատգամ վեհի ,
 գրաւորահան՝ տառիւք հնչի :

Մսգ․

Թէ չես բանկայ՝ Թագաւորի ,
 ո՛չ փոքր է բան՝ աղերասագրի •
 և ո՛չ խնդիր՝ մեծ , կատարի ,
 Թէ յարքայէ՝ ո՛չ ձեռնագրի :

Մսդ․

Ազնուհանն՝ 'ի քաղաքի ,
 անգիր գտեալ է գիւղացի •
 վաճառական՝ ո՛չ եղիցի ,
 Թէ ո՛չ գրչաւ՝ հանգիսացի :

Մսե․

Բայց և անդրէն՝ բանս յողբ դարձցի ,
 ուր գիր անգին՝ կայ 'ի բացի •
 և որ անպէտ , կամ հերքելի ,
 արդ վաճառի՝ և մեծագնի :

Մսզ․

Այլ քեզ լիցի՝ անգիտելի ,
 Թէ գիրք երբէք՝ յուր լինի •
 և արդ արեւ՝ այս յաջողի ,
 ում միշտ 'ի լաւս անդ գեղերի :

Մսէ․

ՊսԷ .

Որով լինի երանելի ,
 նախ քան զերկինս՝ և յաշխարհի .
 նովիմք յերկրէ՝ առաջնորդի ,
 'ի հանդերձեալ՝ կեանս ցանկալի :

ՊսԸ .

Ձի որ և՛ աստ և՛ անդ խնդրի ,
 կեանք երջանիկ՝ առաքինի ,
 առ 'ի գրոց՝ զերկուսն ունի ,
 եթէ բարիոք՝ ոք ուսանի :

ՊսԹ .

Գիրք բարեկամ՝ և ընտանի ,
 որոյ նմանն՝ ոչ գտանի .
 գիրք են սեղան՝ մեծահարկի ,
 ամենահամ՝ մանանայի :

ՄԾ .

Գիրք զարգարանք՝ զարմանալի ,
 և քան զփառս՝ սողոմանի .
 ոյր գիրք միայն՝ են գովելի ,
 փառք իւր յիւրմէ իսկ սլարսաւի :

ՄԾա .

Գիրք՝ երիվարք , կառք՝ չնաւի ,
 տանին զքեզ՝ յաշխարհ հեռի .
 ընթերցասէր՝ ըստ ներքինի ,
 լէր և 'ի կառս , հասեր երկնի :

G 4

ՄԾբ .

մ՛Տբ․

Գերք ըզտղայն՝ և զպատանի,
 հասուն առնեն՝ քան զճերունի․
 զի սլատմութի՛ն՝ ժամանակի,
 յիմո՛ գարս՝ խաղայ, ապրի ։

մ՛Տդ․

Գերք կրթարան՝ փոքու մեծի,
 յառաքինեաց՝ տեսարանի․
 ուր վարք սքեց, քաջաց տոհմի,
 ՚ի մեր անձինս՝ տպաւորի ։

մ՛Տդ․

Գերք ըզվիճակ՝ բիւրասլիսի,
 միում շնորհէ՛ անկարծելի․
 որ իրագէտ՝ ամենայնի,
 է ամենայն՝ ընդ ամենի ։

մ՛Տե․

Ապա ուսմամբ՝ բանս ծաւալի,
 ծովատարած՝ և երկրալի․
 և որ մեծն է՝ գրովք լինի,
 յերկինս գիմել՝ յազբիւր բանի ։

մ՛Տզ․

Եւ ինձ յետնոյս՝ բանահիւսի,
 ուսոյց բերիլ՝ յոյս կարգ բանի․
 որ առաւել գոյ կարևոր,
 ինձ, և խմուսս վերծանողի ։

Հ Ա Տ Ո Ւ Ա ծ . Դ :

Ե՛ւս կարեօրն բանաօրի՛ Բան կենացն
յաւիպէնից :

մ՛ծէ .

Բայց արդ ո՞ արք, տեսաք ցայս վայր ,
ղե՛նչ հարկաւոր՝ յաշխարհի կայր .
այլ հարկ առ հարկ՝ զօրէ խապառ ,
եկայք սիրով՝ յայլ նոր աշխարհ :

մ՛ծը .

Եթէ հացն է՛ կենաց սրատճառ ,
և բան , մտաց՝ ճարակ յարմար .
ապա անմահ բանին՝ սատար ,
մեզ՝ մի միայն անմահարար :

մ՛ծթ .

Եթէ բնութի՛ն՝ ոչ վայրապար ,
ճգնի բերիլ՝ յիւրականն ծայր .
ոչ ապաքէն՝ շնորհաց գուպար ,
փառօք բերի՛ առ Փրկարար :

մ՛կ .

Որ առ վախճան՝ ըզմեզ արար ,
գերաբնական՝ յաւէժաբար .
հրեշտականալ՝ մարդոյս խապառ ,
ախ նա և կեալ՝ անճաբար :

С 5

մկն .

ձկն •

Եւ զի այսպէս , մի զարմանար ,
 թէ արդ փոխի՞ և բանիս ճառ •
 յո՞ճ գերապանծ՝ և հրաշափառ ,
 յանդգնուեթք՝ 'ի բանս անճառ :

ձկք •

Արիստոտէլ՝ մնայ 'ի վայր ,
 ընդ արտաքին՝ դպրաց կաճառ •
 ուր Որոտման՝ որդին գոռայր ,
 յամսոց երկնից՝ զանլուր ցայն վայր :

ձկդ •

Այն՝ որ խնդրէ՝ բան անսպառ ,
 բան անսահման՝ անհատաբար •
 և գտանէ՝ յոյժ սիրաբար ,
 զոր էնն անձ՝ Բան խկաբար :

ձկդ •

'Ի սկզբանէ՝ էր Բանն առ հայր ,
 և Աճ էր , դաւանեցար •
 արդ զի՞ յաճիս՝ դու վայրաստար ,
 անձն իմ յայլ բանս՝ անբանաբար :

ձկէ •

Քեզ կարևոր՝ մի խնդիր կայր ,
 բան հարկաւոր՝ ըսկզբնաբար •
 արդ հարկաւոր էակ լուճար՝
 զբանն անսկիզբն , առ քեզ դադար :
 ձկդ •

ՄկԴ.

Բան գործնական՝ խնդրես յայս ճառ ,
 ասա գտեր՝ զակն և զտառճառ .
 զի բանն անեղ՝ կեանք քո անճառ ,
 եղև մարմին , դու լեր տաճար :

ՄկԵ.

Սորին սիրով՝ թէ վառեցար ,
 Հողւով խմած , իւր զուգափառ ,
 զի՞ տատանիս՝ անմտաբար ,
 յառ 'ի ստորեւ՝ հայել ընդ վայր :

ՄկԶ.

Վէ՛հ ինձ երկինք , երկնից կամար ,
 եօթնասուղեան՝ ճաճանչավառ .
 զի՞ դեգեր իմ՝ մօլորաբար ,
 յերկրի վերայ՝ ես ընդ խաւար :

ՄկԾ.

❖ Այլ վեհագոյն՝ երկնից ցուցար ,
 դու լուսածին՝ Բանին Հօր Մայր .
 տուր ինձ ասել՝ ըստուգաբար ,
 զանպատմելիս՝ ըստ մարդոյս կար :

ՄԿ.

Բաց զբերանս՝ աղբիւրաբար ,
 աղբիւր կենաց՝ դու անսպառ .
 ինձ լուսաւոր՝ յաւել հանճար ,
 դու մայր լուսոյ՝ գերասպայճառ :

G 6

մհա .

մ'հա .

Ասա՛ , ասէ , գո՛գ պարղաբար ,
 զնձ խնդրեմ՝ հայր բարերար .
 հաստիչ հոգւոյ՝ ԽՐ սրբարար ,
 որդւով , հոգւով՝ կենդանարար :

մ'հբ .

Խնդրեա՛ , գտցես , մի՛ յամենար ,
 որպէս և ցարդ՝ դանդալեցար :
 գայ ժամանակ , թէ՛ հեղգացար ,
 և՛ կորուսեր և՛ կորուսար :

մ'հգ .

Յունայն բանից՝ զն՛նչ օգտեցար ,
 յառօրեայ կեանս , բայց տուժեցար .
 'ի՛նուրբ բանից՝ զն՛նչ շահեցար ,
 բայց ըստ գիտնոց՝ հպարտացար :

մ'հդ .

Բան կարևոր՝ արդ իմացար ,
 մի՛ զայդ՝ թողուր մինչև իսպառ .
 բան գործնական՝ քեզ ստացար ,
 'ի՛ սոյն կրթեաց , երանեցար :

մ'հե .

Չերկնից ընթացս՝ շատ է , ուսար ,
 տես թէ՛ արդեօք՝ և ընթացար .
 յաջ և յահեակ՝ շատ է , թուար ,
 գործ է խաղալ՝ յերկնականար :

մ'հզ .

մ'էլ .

Չանդ անճառից՝ խօսել անհնար ,
միայն փուլթա՛ ճեպեա՛ յայն վայր .
տեսլի՛ր , որ է այն ճանապարհ ,
որ զքեզ տանի՛ յերկնից աշխարհ :

մ'էէ .

Հայրենասէր լեր , և արդար ,
որով հասցես՝ յոր տենչացար .
ոչ տեսանել՝ զայն սոսկաբար ,
այլ վայելել՝ միշտ անդադար :

մ'էը .

Ձի թէ Թճ՝ է քո բուն հայր ,
Ժառանգ երկնից՝ ես տիրաբար .
միայն որդի՛ լիջեր յարմար ,
չեք այլ քեզ հոգ՝ 'ի վեր , 'ի վայր :

մ'էթ .

✽ Ես ճանապարհ՝ ճշմարտութի ,
ասաց Որդին՝ Հօր համաբուն .
ես եմ՝ ձեր կեանք և յարութի ,
թէ զիմ կրէք՝ զնմանութի :

մ'էձ .

Յակոբ էառ՝ զանդրանկութի ,
ուր ըզգեցաւ՝ զձև երիցուն .
խորհուրդ յայանի՛ որոց առնուն ,
զիմ կերպարան՝ կենացս ողջոյն :

մ'էն .

մճւն .

Ես մարդացայ՝ նախ վաղագոյն ,
 զի լինիջեք՝ դուք ինձ հանդոյն ,
 որով և հօր՝ երկնաւորի ,
 որդիանայք՝ սիրով հոգւոյն :

մճք .

Իմ կեանք և վարք՝ են յայանագոյն ,
 որոց ցանկան՝ վարել զնոյն .
 հեղ և խոնարհ՝ դաս իմ նախագոյն ,
 խաչ և բաժակ՝ սրտակ դործոյն :

մճդ .

Ուսուցանել՝ ընդ առնելոյն ,
 գործ ընդ բանի՝ ամուլք լծոյն .
 և հաւատոց՝ յաջողութի ,
 սիրով լինի՝ կից ընդ յուսոյն :

մճէ .

Սեր նշանակ՝ ամենեցուն ,
 կնիք իմոցն՝ եդի ըզսոյն .
 սիրով բերին՝ բուրեցուն ,
 իմ փրկելոց՝ ընթացք ուղւոյն :

մճե .

Եւ մի Լքցի սիրտ փոքրոգւոյն ,
 թէ գժոճարին է բան գործոյն .
 զի սիրողն՝ է դիւրագոյն ,
 և հեշտալի՝ գործ ՚ի սիրոյն :

մճզ .

մ ճ Դ .

Տէս , առաքեալք՝ երեքտասան ,
 որոքէս արեամբ չափ ճգնեցան •
 խաչակցելով՝ ինձ միաբան ,
 թագաւորեն՝ և յաւիտեան :

մ ճ Ե .

Տէս , բիւր վկայք՝ հանդիսացան ,
 նոյնօրինակ՝ և զանաղան •
 մահու ինև՝ աստ յաղթական ,
 անդ անթառամ՝ սպակեցան :

մ ճ Ը .

Ո՛ր արտաքինք , որ ՚ի վէպ կան ,
 ո՛ւմ ՚ի սոցունց՝ նման դտան •
 ո՛չ զօրավարք , ո՛չ զօրական ,
 առ մի վկայ՝ իմ , զուգական :

մ ճ Թ .

Մանկունք տիօք , աղջկունք անգամ ,
 քան զքաջազունս՝ դիւցաղնացան •
 կուսանք , այրիք՝ արիացան ,
 կանայք քան զարս՝ արի ցուցան :

մ Դ .

Չաչխարհ , զմարմին , և զսատանայն ,
 ոտից իւրեանց՝ եդին կոխան •
 վարդ և շուշան՝ ինձ ծաղկեցան ,
 անուշահոտ՝ յերկնից խորան :

մ Դ Թ .

միլն .

Հովիւնք , ոչխարք , իմ սիրական ,
առաքելնիք՝ սէսպիսաջան .
աղգի աղգի՝ աստ փայլեցան ,
անդ տիրապէս՝ արփիացան :

միլք .

Աղքատք հոգւով՝ հարստացան ,
եղեալ ժառանգ՝ արքայութեան .
հիւանդք՝ սիրով համբերութե՛ն ,
յանմահ՝ ՚ի կէանս՝ առողջացան ,

միլգ .

Տառապեւոց՝ ՚ի կարծ մարդկան ,
երջանկութիս՝ սլահի միայն .
վաստակեւոց՝ յաշխատութե՛ն ,
հանգիստ վայել՝ անանցական :

միլդ .

Ո՛չ արդ տատմեմ՝ զանճառականն ,
եկայք տեսէք՝ զանտեսսական .
է այս բնութի՛ն՝ երանութեան ,
որ ժառանգէ , իմանայ զայն :

միլէ .

Եւ արդ եկայք ամենեքեան ,
իմ վաստակեալք՝ հաճոյական .
եւ հանգուցից՝ զձեզ յաւիտեան ,
՚ի յօթեանս հօր՝ ըստ խոստման :

միլէ .

մղլ.

'Իբաց կացցեն՝ ամենեքեան ,
մշակք չարեաց՝ յորդիս մարդկան ,
անիծանէ՝ օրհնեալս բերան ,
զորս արժանի չեն օրհնութէ :

մղէ .

Բաժին գործոց անբանական ,
գեհեան , և դե՛ տանջողական .
ոչ հանգուցին՝ զիս մի վայրկեան ,
ոչ հանդիցեն՝ և յաւիտեան :

մղւ .

❖ Ձե՛նչ տաց առ բանն՝ սլատասխանի ,
ասո՛ անձն իմ՝ աւաղելի .
ափիբերան՝ կաս 'ի սրտի ,
բա՛ն ոչ ունիս , թէ գործ թերի :

մղթ .

Ոչ բան կամիմ՝ կարկատելի ,
գործ բանաւոր՝ ինձ խնդրելի .
զոր թէ գտից , ինձ երանի ,
քանզի հասից՝ իմ վախճանի :

յ .

Վախճան մարդոյս՝ մի է յայտնի ,
ա՛ծ՝ հաստիչ՝ ամենայնի .
ու՛մ հասանել՝ և փափաքի ,
տիպ արարչին՝ անմահ հոգի :

յւն .

յԹ .

Արդ էկ անկցնւք՝ ասն առաջի ,
 Ժաեւ մեզ շնորհ՝ 'ի սոյն կարգի .
 զի որ խնդրէ , առնու , ասի .
 ոչ խնդրողին՝ և ոչ տայի :

յՔ .

Տի նա՛ այս է երախայրի ,
 պտուղ տնկոյս բանահանի .
 բանիւ պատուէալ մարդկան աղգի՝
 բանիւ պատուէլ զտուիչ բանի :

յԳ .

Ձի բանահան պաշտօնըս գրի ,
 միայն նմին ընդունելի .
 ներքին նախ բան՝ մտաւորի ,
 զոյգ ընդ բանից՝ լեզուի , գրչի :

յԴ .

Բան գոհութե՛ն ընդ պարգևի ,
 և հայցուածոց՝ ըստ պատշաճի .
 բան առանձին՝ 'ի խորս սրաի ,
 բան արտաքին՝ հռչակելի :

յԵ .

Յայս ակնարկեն՝ աղօթանի ,
 յամէն լեզու՝ բաղմապիտի .
 և 'ի գովեսա՝ փառաց վէհի ,
 երդք , և քարոզք՝ 'ի հանդիսի :

յԶ .

յԼ.

Ընդ որս և մերս կցորդեսցի,
 նոճագ բանիս՝ աղերոալի •
 բան գործնական՝ սլաշտօն բարի,
 կամահաաար՝ տեանուն սրաի :

յԿ.

✠ Լուր բանական դոջմանց ոգւոց,
 Խոր յաթուռոյ փառաց քոյոց •
 բարձրեալդ արքայ յանմերձ ՚ի լոյս,
 Լուր ըզսրտից ձայն ՚ի խորոց :

յԼ.

Արա՛ յերկրի զմեզ երկնախօս,
 դալ տեսանել՝ զբանն ընդարոյս •
 Թէ աստ լսես՝ ինդրունածոց,
 անդ երգեսցուք՝ երգս ՚ի հաճոյս :

յԼԳ.

Աճ՝ Խճ՝ հոգւոց մարմնոց,
 Խորդ Խորանց՝ բոլորեցունց •
 դու ողորմեա՛ անձանց մերոց,
 գնալ յօրէնս՝ քո, ընդ ուղղոց :

յԼԴ.

Եմք բանական՝ ըստ դիմաց քոյ,
 մտօք, կամօք՝ իչխան ոգւոց •
 Թէ կամիցիմք, տիրեմք բարուց,
 լինիմք բարի, և բարեյոյս :

յԼԵ.

յԺա .

Թէ ոչ կամիմք , անտարակոյս ,
 զանձանց չարիս՝ լացցուք անյոյս •
 զի մեք մեզէն՝ բարեաց մերոց ,
 նոյն և չարեաց՝ առթեմք ըզյոյս :

յԺբ .

Բայց խեղատէս՝ դու ի՞նչ մեր յոյս ,
 ի՞նչ կենարար , կեանք մեր և լոյս •
 Եթէ ըզմեզ՝ ՚ի մեզ թողուս ,
 ահա կորեաք • մի թողուցուս :

յԺգ .

Արդ զօրուծի՝ կամաց մերոց ,
 ՚ի քէն ինդրեմք՝ ըստ կամաց քոց •
 ՚ի խորասկէլ՝ զկամըս մարմնոյս ,
 զաստատմբեալն առ ՚ի հոգւոյս :

յԺդ .

Տուր ճանաչել՝ խաւարելոցս ,
 ըզքո շաւիղս՝ տանօղ ՚ի լոյս •
 տուր միշտ գնալ՝ վերնախրախոյս ,
 յիշատակաւ՝ մեր հայրենւոյս :

յԺե .

Ուր են անբաւ՝ օժիտք վարձուց ,
 ընդ դուղնաքեայ՝ աստ վաստակոց •
 հանգիստ յաւէժ՝ առ քո գահոյս ,
 երեքսրբեան ի՞նչ եռալոյս :

Հ Ա Տ Ո Ւ Ա Ճ . Ե :

Խնդիր երջանիս-ն է բանականին յաստի
կէանս :

յԺզ .

Լսած անձն իմ, զի՞նչ այլ խնդրես,
բան կարևոր՝ քեզ, յայս հանդէս .
արծաթ, ոսկի, չունիմ, դիտես,
զոր տայ ինձ փր, զայն տամ ես քեզ :

յԺէ .

Հանգիստ սրտի, կամիմ, ասես,
խաղաղութի՛ դու ինձ տացես .
անհոգ եղէց՝ ՚ի զբաղմանէս,
ուրախ զո՛ւարթ ինձ կեանք դացես :

յԺը .

Խնդիր խնդրոց՝ է այդ քո բան .
տես, բանաւոր, եթէ անբան .
զի և խնդրողք՝ անգիտանան,
թէ զի՞նչ խնդրեն յայսպոյն տենչման :

յԺթ .

Չարքայութին՝ երանական,
վայրաբերեն՝ մտօք, ուր կան .
բարւոյք է մեզ՝ աստ գոլ ասեն,
կեղծեալ յանձինս՝ կեանք աննման :

յԺ .

յԵ .

Եւ զի այդ է՝ հակասական ,
 յերկրի երկիրք՝ ծագ ներհական ,
 միշտ տառապին , ոչ շատանան ,
 յոր և դոցին՝ ՚ի հանգստեան ,

յԼա .

Կամ՝ կամեհան՝ յանկեալ բնութե ,
 զնախկին վիճակ՝ եղեմական .
 անախտ , անվիշտ , կեանք դիւրութե ,
 հոգւոյ՝ մարմնոյ՝ ասորժական :

յԵբ .

Չի՞ ոչ խորհիք՝ որդիք մարդկան ,
 այն անց դնաց՝ անդարձական .
 արդ ՚ի վիճակ՝ Թշուառութե ,
 զուր է ցանկալ՝ երջանկութե :

յԵգ .

Եւ արդ խնդրել՝ սրաւրս է ձեզ զայն ,
 որ վիճակիդ ձերում սրտական .
 ապա թէ ոչ՝ յանկարելիս ,
 ձկախլ՝ է դործ յիմարական :

յԵդ .

Ես կամի՛ թե թուչական ,
 յածիլ յՅ՝ ընդ մի վայրկեան .
 արդ դժուարիլ՝ իցե՞ արժան ,
 զի չեմ՝ ձեռնհաս՝ յօժարութե :

յԵե .

յՆԵ .

Դու կամէիր՝ լինել իշխան ,
 ծառայ ելոյր՝ յայլոյ 'ի դրան .
 դժկամակեալ յայդ աշտիճան ,
 թէ գուց կամիս՝ թշուճառական :

յՆԴ .

Հիւանդք կամին՝ ամենեքեան ,
 քաջողջանալ՝ փոյթ առժամայն .
 թէ դայրասցին՝ ի ցաւ իւրեան ,
 ոչ ողջ լինին՝ և անագան :

յՆԷ .

Վաճառականք՝ յաջողութե՛ ,
 բերանաբաց՝ միշտ կան և մնան .
 թէ յաջողէ՛ ոչ , ղինչ արժան ,
 համբերութին՝ է գեղ միայն :

յՆԸ .

Արհեստաւորք՝ ճարտարութե՛ ,
 թիւրեն ինչ գործ՝ ի սատահման .
 միթէ թողուն զարհեստն , երթան ,
 ոչ արհեստիւ՛ ուղղեն զսոտանն :

յՆԹ .

Թագաւորաց՝ չէ բաւական ,
 պատիւ , գահոյք , գանձ մեծութե՛ .
 ուր հանդիպի՛ զօր ամենայն ,
 զոր ոչ կամին՝ բիւրաւոր բան :

յԼ․

Ո՞ր կարօղ է՝ առնել դարման ,
 զի դիւր սրտի՝ գտցէ արքայն •
 Թէ ոչ ինքնին՝ ազդէ ինքեան ,
 Թէ չես անձ , այլ՝ մարդ ունայն ։

յԼա․

Առաքինեաց՝ ժողովարան ,
 հրեշտակակերպ՝ վարուք գոգ կեան •
 այլ պակասի ոչ անդ և այն ,
 զի այր եղբօր՝ անյարմար գան ։

յԼբ․

Արդ թէ կամին՝ կալ միաբան ,
 միմեանց տանին՝ պակասութե •
 տպա թէ ոչ՝ ոյք նեղանան ,
 չեղեն հրեշտակ , եղեն սատան ։

յԼգ․

Յանապատի՝ հանդարտութե ,
 խորհուրդք և ախտք՝ պատերազմ տան •
 որ ոք յաղթէ՝ անձին միայն ,
 նա երջանիկ է յիւր կայան ։

յԼդ․

Իսկ որ գերին է մոլութե ,
 կամ ինքնահաճ , ինքնահուան ,
 յաղթի յիւրմէ՝ ծիւրի յինքեան ,
 դժոխք է սիրտն , անդ սատանայն ։

Գ

յԼե․

յԼԷ .

✱ Տեսեր ով մարդ՝ 'ի փորձանձին ,
տեսեր և յայլս՝ փորձիճ նոցին .
զի զոր խնդրես՝ հանգիստ սրտին ,
'ի քո 'ի ձեռս է առանձին :

յԼԸ .

Ո՛չ տայ Ծ՝ ըզխնդրելին ,
և ո՛չ վիճակ՝ լաւ լը բախտին .
այլ տայ անձին՝ առաքինին ,
զերջանկութի՝ ըզկարելին :

յԼԹ .

Ո՛չ փասէ ոք ընկերին ,
որպէս փասի՝ յախտէ անձին .
և ո՛չ օգտէ բարեկամին ,
որպէս օգնէ անձամբ անձին :

յԼԸ .

Հանգա քեզէն՝ 'ի տան սրտին ,
խնդրեա՛ հանգիստ՝ զցանկալին .
բարձ զսլատճառս՝ յուզմանց նորին ,
խաղաղացաւ՝ ծով խորհրդին :

յԼԹ .

Հողմունք հնչէն , որչափ կամին .
բայց ընդ կամիւքո՛ դադարին .
իծաբար՝ սաստեա՛ ծովին ,
տես թէ՛ որպէս՝ տերամբ կարկին :
Դ D յԼ .

յն •

Հողմ՝ աջակողմ՝ փառասիրին ,
միշտ քեզ մերիկ՝ հանէ ուժգին •
փչեա՛ ընդ դէմ՝ փչման նորին ,
անփառասէ՛ր լեր • խաղաղին :

յնա •

Հպարտութե՛՛ ուռոյցք սրտին ,
խոնարհութե՛՛ փոյթ զիջանին •
և բարկացայտ՝ զայրոյթք ակտին ,
հեզիկ հողւով՝ մեղմեալ ճ՛նշին :

յնք •

Անյադութին այն ագահին ,
որ սնն ասէ շատ՝ բնաւին ,
սակաւապէտ բարուք քոյին ,
անհետանայ ամենեւին :

յնդ •

Սիրտ դժկամակ՝ անհամբերին ,
որ դառնանայր՝ յիրքս չնչին ,
թէ համբերէ՛ ըստ մեծանձին ,
քաղցրացուսցէ՛ և ըզլեղին :

յնդ •

Կարճմտութին՝ է մարդկային ,
որ ինքնատանջ՝ լլիխ յանձին •
երկայնամիտ՝ առաքինին ,
հանդէ ՚ի վայր՝ ՚ի դաւարին :

յնե •

յնե .

Իսկ ք բաղձացեալք՝ հաճոյք չնչին ,
խթան խեթկիչ՝ են մարտին .
այլ որ իշխէ՝ իւրում սրտին ,
ձիավարէ՝ ըստ ասպետին :

յնդ .

Չախողութեան՝ հողմք չնչեցին ,
էր հաստատուն՝ հանգոյն վիժին .
ալիք զալեօք թող բաղխեացին ,
անդ խորտակեալ՝ ընկրկեացին :

յնէ .

Չինչորդ առին , զկեանքս թողին ,
խնդան ընդ շահ՝ ի վաճառին .
ոչ և սովիմք՝ զքեանրդ բարձին ,
զեքո ընթացք՝ թեթեւացին :

յսը .

Յաւք խօթութեց՝ սլաշարեցին ,
անտանելի մարմնոյդ թուին .
ժուժեան համբեր , ոչ յերկարին ,
սաստիկն է սուղ , յերկարք մեղմին :

յնթ .

Բայց և մահու՝ գուշակք լինին ,
ոչ զայդ ժխտեմ , թող լինիցին .
մահ արդարոց՝ գուռն է կենաց ,
թող մեղաւորք՝ արդարացին :

յԾ .

Յիշեա՛ յիշեա՛ կրկին կրկին ,
 ընդ հարկաւորս՝ ըզհեշտալին .
 հարկ է տանել՝ մահու վճռին ,
 միշտ դժուճարինք՝ սիրով գիւրին :

յԾա .

Ոյք սլատրաստին , ոչինչ խռովին .
 այլ անսլատրաստից՝ ելք ասագին .
 թէ հեթանոսք՝ հնարս խորհին ,
 հաւատացեալք՝ զեւրդ թմրին :

յԾբ .

Սուտ հայթհայթանս՝ սոփեստք գտին ,
 զի 'ի չարիս՝ չըզարեացին .
 մեզ և չարիք՝ ռահ առ բարին ,
 հզօր ձեռամբ՝ երկնաւորին :

յԾգ .

Կնիք բանիս՝ առած վերջին ,
 չիք յաշխարհի՝ հանգիստ անձին .
 միայն հանդի՝ առաքինին ,
 աստէն յուսով , փառօք յերկին :

յԾդ .

✠ Մեկնեա՛ զառակդ , ասես , ո՛վ դու ,
 որ չերեխ լաւ վճռատու .
 ո՛չ տեսանես՝ աջօք իսկ քո ,
 բիւր երջանիկ՝ յաշխարհի գոյ :

յԾե .

յճե .

Է՛ որ վայելա՛ ունի գանձու ,
է որ իշխէ՛ հողոյ , ծովու .
ոմն 'ի սրատի՛ն փառաց շքոյ ,
այլ ոմն առնէ՛ որ զի՛նչ հաճոյ :

յճզ .

Սա տանոււո՛ր՝ բաղկաստածու ,
որդւովք , թուամբք՝ տունկ ւնյ .
նա ողջանդամ՝ անդէտ ցաւոյ ,
պճնեալ գեղով՝ հանդերձ զարդու :

յճէ .

Ոմն հացալից՝ յադ սեղանոյ ,
խորաիկ յընթրիս՝ և 'ի ճաշու .
դոյ իսկ նման՝ և չնյ ,
անշարժ , անդործ , զերծ 'ի հոգոյ :

յճը .

Զոր այլ թո՛ւնեմ՝ հանդիստ մարմնոյ ,
որով հանգչի՛ և սիրտ մարդոյ .
նչ աւելի և ես խնդրեմ ,
գտայց ասեմ , 'ի սոյն դասու :

յճթ .

❖ Ծաղր 'ի տեղի պատասխանւոյ ,
պատրաստական է ինձ յայժմու .
նախ զառաջին՝ ընդ բանըդ քոյ ,
բաժանական՝ յայս յայն անդոյ :

D 3

յճ .

ՅԷ .

Ձե՛ր ոչ գտեր՝ զորդի մարդոյ ,
 անմիգ ունակ բարւոյ .
 զե՛ր և շատին համ սակաւու ,
 փոխան եգիբ՝ զոմն եղ առ մու :

ՅԷԱ .

Ասա՛ , թո՛ւով ինձ համարոյ ,
 ո՛յք և քանի՛ք կան յայն պարու .
 քիւր երջանիկք՝ ասես 'ի լոյ ,
 զննեա՛ զաշխարհ , և ո՛չ մի դոյ :

ՅԷԲ .

Ահա կրեսոս՝ այր մի գանձու ,
 ել 'ի տասպակ՝ դառնն մահու .
 ո՛չ օգտեցին ինչք 'ի պահու ,
 քանի՛ն զերծաւ լոկ իմաստնոյ :

ՅԷԳ .

Աւա՛ղ փառացս՝ ասէր յուշոյ ,
 ըստ սողոնին՝ նախ աղդելոյ .
 ո՛չ երանել պիտի մարդոյ ,
 ցորչափ ոք է մահկանացու :

ՅԷԴ .

Ահա կիւրոս՝ գեր 'ի վերոյ ,
 յաղթող նմին , ճայլ որերոյ .
 տես 'ի կնոջէ՛ յաղթի այրւոյ ,
 յերկիր հնդկաց՝ թաղմամբ իշոյ :

ՅԷԵ .

յկԷ .

Ահա կրասոս՝ ճոխ մեծարդոյ,
 'ի հայս անկաւ՝ կորեաւ զօրու .
 խոց կարեւէր՝ կորուսաւ դրօշու,
 դուժեաց 'ի հռովմ, սուգ զգենու :

յկԸ .

Զմակեդոն՝ աղէքսանդրու,
 ո՞ր ողբասցէ՝ զանցս 'ի մօտոյ .
 յօտարութե՛ն՝ վախճանելոյ,
 ճեա անժառանգ՝ վիճակ ցաւոյ :

յկԹ .

Աստեղահոյլ՝ կարծեալքրդ .քո,
 են մուրախք՝ այլ ընդ այլոյ .
 ոչ հաստատուն ոք անսող գոյ,
 մարդ սահական՝ աւաղ ծովու :

յկՆ .

Արեւիափայլ՝ յամէն դարու,
 մի սողմոնն՝ գիտեմք 'ի գրոյ .
 ընէր զիւր վայելս՝ յիւր պատմելոյ,
 յօժարութե՛ն՝ կոչեաց ոգւոյ :

յկՇ .

Հանգիստ խնդրեաց, եհաս ցաւոյ,
 աշխատութի՛ք՝ եւ յօր մահու .
 Թող զվիճակ՝ հոգւոյ իւրոյ,
 ոչ երանեմք՝ երկբայելոյ :

յհ .

Տեսէր զառակս՝ սկիտանացու ,
 Թէ յՅի՛ հանգիստ ոչ գոյ .
 և զՄեկնուԹի՛ քո երազոյ ,
 որով խաբիս ՚ի կեանքս քո :

յհա .

Ա՛յլէ առջեր գու յխմաստնոյ ,
 խրատ վերջին՝ յանսուտ վճռոյ .
 ունայնուԹի՛ ունայնուԹեց ,
 ամ ինչ , բաց յայ :

Հ Ա Տ Ո Ւ Ա ծ . Զ :

Խափանաբար էրջանկու-մէ մերոյ յաստիս
 և յանստիս :

յհբ .

Այլ ես անձամբ՝ զանձնէ յանձին ,
 ոգորելով՝ գուժեմ ուժգին .
 զի երջանիկ զառաքինին ,
 գիտելով չափ , մուլեմ ինքնին :

յհգ .

Հանգիստ գիտեմ զանսխտ անձին ,
 այլ ես յախտից՝ գերիմ անձին .
 ճանաչելով միշտ՝ զիմ բարին ,
 միշտ զակատիմ՝ ըղհետ չարին :

յհդ .

յհդ.

Գիտեմ զոր եմ՝ ոչինչ չնչին,
 պարծիլ կամիմ՝ ըղպանծալին.
 հող և մոխիր՝ բարձրամտիմ.
 և հողմավար՝ կարծեօք բերիմ:

յհե.

Յանձին սիրոյ՝ կուրացեալ իմ,
 ոչ տեսանեմ՝ զոր յիս ունիմ.
 գերանակիր՝ աչօք դատիմ,
 ըզլիւղ փոքրիկ՝ մերձաւորին:

յհզ.

Նախանձ ունիմ՝ ոչ ՚ի բարին,
 այլ նախանձիմ՝ ընդ անբարին,
 յաչաղանօք՝ միշտ ընկերին,
 ըստգտանեմ և զգովելին:

յհէ.

Հուր բարկութե՛ք՝ բոց ճարակիմ,
 կիզիչ անձին՝ և օտարին.
 և տմարդի բարուք յետին,
 դազանանամ ըստ անբանին:

յհը.

Պղերգութե՛ք՝ յանձին ծանրիմ,
 և ծանրանամ՝ փոքու մեծին.
 յիմոց պարտուց՝ ճիշեալ դնիմ,
 և միշտ խրատիչ՝ այլոց լինիմ:

յ^հթ.

Անյադ սովեալ՝ երկրաւորին,
եմ անձաշակ՝ երկնաւորին.
անջաւորաց սիրով կապիմ,
որ ոչ թողուն՝ խորհել զվերին:

յձ.

Խորհուրդ մարմնոյ, յորդոր գիւճին,
զցայդ և զցերեկ՝ զինև սպաին.
և ո՛ւր մնայ՝ հոգալ զհոգին,
ընկղմելոյս՝ միշտ ՚ի մարմին:

յձե.

Աամբ և հաճոյք՝ իմոյս անձին,
սարխսալ ընդդէմ անձինս կանգնին.
զի զոր կամիմ, ուր ոչ լինին,
անձամբ անձին՝ հակառակիմ:

յձբ.

Սէր Ծի՛ աշխարեւին,
ըզսէր բառնայ՝ զածային.
ունայնութի՛ բոլորովին,
